Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33
4-24

05 JAN

ՀՆՋ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ. Կ.-ԹԻՒՆ

Պրոլետարիներ բոլոր երկրների՝ միացէ՛ք։

Բ. Ս.

ԿԱՊԻՏԱԼ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Սկզբնական տեղեկութիւններ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մասնաճիւղի

No. 6

Թարգմ. Անրիւնան

33
4-24

ՐՈՒՍԶՈՒՔ
Տպարան «Վերածնութիւն»-ի
1904

3
-24

5 FEB 2007

ՀՆՉ. ՅԵՂԱՓ. ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ. Կ.-ԹԻՒ

Պրոլետարիներ բոլոր երկրների՝ միացէ՛ք:

Բ. Ս.

ԿԱՊԻՏԱԼ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Սկզբնական տեղեկութիւններ
ԲԱՂԱԲԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Հրատ. «ԸՆԿԵՐ» Մատնանիշի
No. 6

Թարգմ. Ահրիման

ՐՈՒՍԶՈՒՔ
Տպարան „Վերածնութիւն"-ի
1904

21.176

17 MAY 2013

611-92

Իր յարգելի

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ

ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԲԷԿԻՆ

Ընկերաբար

Նուիրում է

ԹԱՐԳՄԱՆՈՂԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ բրոշիւրը, որ թարգմանուած է ռուսերէնից եւ որն ընտիրեալ գիտական սոցիալիզմի մէկ անմեղ, հանրամատչելի բացատրութիւնն է, –արդէն ռուսերէն լեզուով Ռուսաստանում հրատարակուած է եւ ռուս ցենզուրայի հաստ թաթերի տակից մի կերպ դուրս եկած։

Սակայն այդ թաթերն ոյժեղ կերպով սեղմեցին հայերէն թարգմանութիւնները՝ շատերի կողմից ներկայացուած հրատարակման թոյլտուութիւն ստանալու համար։

Այլի առաջ ունենալով այն, որ հայ բանւորների մէջ դեռ ԱՇՍ ՏԵՍԱԿԻ հանրամատչելի եւ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ մանրամասն բացատրող բրոշիւր չէ լոյս տեսել, նկատելով այն, որ վաղուց երեւան եկած եւ կուի դաշտը նետուած հայ բանւոր դասակարգին կատարեալ ինքնագիտակցութեան բերելու համար գործադրած ու գործադրելիք տեսական, սոցիալիստական, աշխատանքին

խիստ նպաստող մեկ հրատարակութիւն է այս, — որոշեց լոյս ընծայել գէթ արտասահմանում՝ չը զրկելու համար բանւորին ԻՆՔՆԱՋԱՐԳԱՅՄԱՆ նպաստ առաջին եւ կարեւոր նիւթից։

Մօտիկ ապագայում, — եթէ հանգամանքները մեզ թոյլ տան— կը հրատարակենք խմբագրացման համար մի շարք սխեմատական բրոշիւրներ, —գենքեր պրոլետարիատի համար իրեն ազատարար շարժումը գիտակցաբար իր ուսերի վրայ տանելու եւ հասոզուած մինչեւ վերջը կռուելու իր դասակարգային շահերի համար, բազմատանջ մարդկութեան վերջնական, իսկական ազատութեան մեծ գաղափարի, սոցիալիզմի իրականացման համար։

Թող սա առաջին գենքը լինի մեր ընկերների ձեռքում — իրենց դժուարին, սակայն քաղցր, կռիւի փոքրուկիցից ապարեզում։

Ռուսչուք
10 Հոկտ. 1904

ԱՀՐԻՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ամէնքին յայտնի է, որ մարդիկ միշտ այնպէս չեն ապրել, ինչպէս այժմ։

Առաջ նրանք ինչպէս էին ապրում, ինչպէս աշխատում և ինչպէս օգտուում իրենց աշխատանքի պտուղներից, — դրա մասին մենք կ՚իմանանք գիտնականների գրքերից։

Մենք կիմանանք, որ կար ժամանակ, երբ, բացի մահակից, նետից ու քարեայ դանակից, մարդիկ ուրիշ ոչ մեկ զէնք չունէին։ Ի հարկէ, այն ժամանակ հողի մշակութեան և նրստակեաց կեանքի մասին խօսքանպամ չէր կարող լինել։ Իրենց պարէնը հայթհայթելու համար՝ մարդիկ ստիպուած էին մի ա մեկ տեղից միւսը փոխադրուել։ Բայց որովհետև հասարակ նետով ու մահակով զինուած մարդն անկարող կը լինէր մեծ կենդանիներ որսալ, ոչ էլ պաշտպանուել գիշակեր կենդանիներից, ուստի մարդիկ ստիպուած էին համայքներով ապրել, միասին աշխատել, միասին որոնել իրենց ապրուստի միջոցներն ու ապա ընդհանուր աւարն իրար մէջ բաժանել։

Ժամանակի ընթացքում մարդն աւելի և աւելի զարգացրեց իւր միտքն, աւելի լաւացրեց գործիքները, սովորեց օգտուել հողի տուրքերից և դրա շնորհով աւելի զօրացաւ։ Նա դառնում է նստակեաց և սկսում է բոյսեր աճեցնելով պարապել։ Այդ ժամանակ արդէն նա ինքը կարող էր բաւարարութիւն տալ իւր պահանջներին և ապրուստի միջոցներ գտնելու համար՝ օգնութեան կարիք չէր զգում։ Ճիշդ է, այժմ էլ հարկաւոր էր կազմել մեծ կամ փոքր խմբեր՝ պաշտպանելու համար աւելի ուժեղ թշնամիներից։ Իւր խմբի մէջ էլ իւրաքանչիւրն աշխատում էր միայն իրեն համար, ինքն էր պատրաստում իրեն համար ամէնն՝ ինչ իրեն հարկաւոր էր և աշխատանքի ամբողջ արդիւնքի սեփականութեան և նրանից օգտուելու կատարեալ իրաւունք ունէր։ Սակայն այդ ժամանակները մարդը դեռ շատ տգէտ էր, չէր կարող օգտուել հողի պարգևներից ինչպէս հարկն էր, գործիքները չունէր ու շատ աղքատ էր ապրում։

Անցան դարձեալ հարիւրաւոր, գուցէ և հազարաւոր, տարիներ։ Մարդը լաւ ծանօթացաւ բնութեան հետ, աստիճանաբար շատ նոր բաներ սովորեց, աշխատանքի հին գործիքներն աւելի լաւացրեց և շատ նորերը հնարեց, սովորեց օգտուել ջրի և քամիի ոյժից։ Ի հարկէ, դրա հետ էլ միասին աւելի լաւացաւ նրա դրութիւնը։ Սակայն ուսման և փորձառութեան առաջդիմութեան հետ էլ միաժամանակ՝ մարդ-

կութեան նախկին միատեսակ գործիքների և արհեստների մէջ՝ երևաց որոշ բազմատեսակութիւն և անկարելի եղաւ, որ միևնոյն մարդը միատեսակ լաւ տիրէր բոլոր գործիքներին և պարապէր բոլոր գործերով. այսպէս, օրինակ, որ նա կարողանար կօշիկներ կարել, տներ շինել և միևնոյն ժամանակ դաշտում աշխատել։ Ընդհակառակը, դուրս եկաւ, որ միայն մէկ գործով պարապող մարդը կատարում էր այն աւելի լաւ և աւելի արագ, քան այն միջոցին, երբ նա միաժամանակ զբաղւած էր մէկ քանի գործերով։ Դրա հետևանքն այն եղաւ, որ մարդկանց մէջ առաջացաւ աշխատանքի բաժանում. մէկ մասը սկսեց երկրագործութեամբ պարապել՝ առանց ուրիշ ոչէ գործով զբաղւելու, միւսը՝ զբաղւեց բրուտութեամբ, երրորդը՝ հիւսնութեամբ և այլն։

Հասկանալի է, որ երկրագործները սկսեցին աւելի շատ հացահատիկներ ստանալ, քան հարկաւոր էր նրանց սեփական գործածութեան համար։ Իրենց մօտ մնացած աւելորդը նրանք տալիս էին կօշկակարին՝ կօշիկների փոխանակ, դերձակին՝ հագուստների, հիւսնին՝ տուն շինելու համար և այլն։ Այդպիսով, ո՛չ կօշկակակարը, ո՛չ դերձակն ու ո՛չ էլ հիւսնը՝ կարիք չունէին հողի մշակութեամբ զբաղւելու, որովհետև հացը նրանք իրենց աշխատանքից էին ստանում։ Դրանից ահագին օգուտ ստացուեց ամէնքի համար։ Խոփին սովորած երկրագործը պէտք է երկու շաբաթ

կորցնէր, գուցէ և աւելի շատ, մէկ զոյգ կօշիկ կարելու համար, այնինչ որպէս կանոնակարգ՝ հէնց նոյն զոյգ կօշիկը մէկ օրում կը կարէր։ Երկրագործը կօշիկների փոխարէն տալիս էր նրան այնքան հաց, որքան կը կարողանար վաստակել այն ժամանակի ընթացքում, որը կօշկակարը գործ էր դրած նրան կօշիկներ կարելու համար։ Այդպիսով նա, երկրագործը, շահեց շատ ժամանակ, —ամբողջ 13 օր։

Բայց այդ ժամանակ էլ մարդիկ, իրենց արդիւնաբերած առարկաների մեծ մասը գործ էին ածում սեփական պէտքերին բաւարարութիւն տալու համար և միայն չնչին մասն էր, որ փոխանակում էին ուրիշ առարկաների հետ։

Սակայն յայտնի է, որ միայն ձեռքերով շատ բան չէ կարելի անել, և եթէ գոյութիւն չունենային արդիւնաբերութեան տարիշ կերպեր, այնժամանակ մարդը յաւիտենական կարիքի կը լինէր դատապարտած։

Բարեբաղդաբար մարդը մեքենայ հնարեց։ Վերջինս նրան միջոց տուեց կարճ ժամանակում և համեմատաբար պակաս աշխատանքով աւելի լաւ պատրաստելու այն ապրանքներն, որոնք երբեմն, ձեռքի աշխատանքի ժամանակ, պահանջում էին շատ աւելի ծանր ու անհաճոյ աշխատանք և որանք նոյնիսկ չքերութեամբ և ամրութեամբ զգալի կերպով տեղի տուին սովորական գործարանական ապրանքներին։ Գիւղական դարբինը մէկ վատ պայտ պատրաստութեան համար գործ կը դնէ մէկ

քանի ժամայ ծանր, տանջալից աշխատանք՝ կրակարանի մօտ։ այնինչ Ամերիկայում մէկ գործարանական բանուոր, մեքենայի օգնութեամբ, մէկ բոպէում դուրս է բերում մէկ քանի հարիւր ամբը ու գեղեցիկ պայտեր։ Ջուլհակը ձեռքի դաղդեահի վրայ պէտք է շատ չարչարուի, որ կարողանայ մէկ քանի արշին քաթան գործել, այն ինչ մէկ ժամում մեքենայի վրայ 1000 արշին քաթան է պատրաստւում։

Այդպէս էլ ամէն բանի մէջ մեքենան է բանում մարդու տեղն ու նրան միջոց է տալիս քիչ աշխատանքով պատրաստել բաւական մեծ քանակութեամբ իրեր՝ ապրուստի համար։ Ահա թէ ինչու, եթէ սրանից հարիւր տարի առաջ վայելուչ հագուստը, մանաւանդ սենեակները առհասարակ կեանքի որոշ յարմարութիւնները՝ համարում էին շռայլութիւն՝ մատչելի միայն հարուստների մէկ փոքրիկ խմբին, որովհետև ձեռքի աշխատանքը կարող էր շատ քիչ ապրանք արդիւնաբերել, — այն ինչ այժմ մեքենան կարողանում է պատրաստել այնպիսի քանակութեամբ, որ նրանք բաւական կը լինէին բոլոր մարդկանց պէտքերին բաւարարութիւն տալու համար։

Գիտնականները հաշուել են, որ եթէ մարդիկ մէկ օրում հինգական ժամ աշխատեն, այն ժամանակ նրանք, արդիւնաբերութեան գործիքների այժմեան դրութեան մէջ էլ (խոշոր մեքենաների և գործարանների գոյութեան օ-

ռով), հեռացնելով մէկ քանի թերութիւններ, — կարող կը լինէին կատարելապէս բաւարարութիւն տալ իրենց բոլոր պահանջներին։ Իսկ եթէ մեքենաների մէջ աւելի մեծ կատարելագործումներ մտցնէին և աշխատանքը վերջնականապէս փոխարինուած լինէր մեքենաներով, այն ժամանակ օրական երեք ժամայ աշխատանքն էլ բաւական կը լինէր։

Այդ դէպքում մարդ ո՞րքան ժամանակ կ՚ունենար կրթութեան, զարգացման և հանգստութեան համար։

Մեր ասածից երևում է, թէ մեքենան որպիսի զարկ է տալիս մարդկային բարօրութեան, ինչպէս է կրճատում ու թեթևացնում աշխատանքն ու որքան աւելի յարմար և հաճելի կարող է դարձնել ապագայի կեանքը։

Բայց դրանով չէ սահմանափակւում մեքենայի ազդեցութիւնը՝ մարդկանց յարաբերութիւնների և մարդկային կարգ-կանոնի վրայ։

Առաջ իւրաքանչիւր առանձին համայնք, գիւղ, նոյն իսկ ամէն մէկ գիւղական ընտանիք՝ ինքն էր արդիւնաբերում այն ամէնն, ինչ հարկաւոր էր նրա ապրուստի համար։ Իւրաքանչիւր երկրագործ իւր սեփական հացահատիկից ալիւր էր աղում և հաց թխում, իւր սեփական վշից պատրաստում էր քափան ըմպելիքներ, որը կարում էր կինը, վերջապէս ինքն էր կարատում ու տուն բերում փայտը, որից էլ ինքն էր իրեն համար խրճիթ շինում։ Դրա շնորհով իւրաքանչիւր այդ-

պիսի ընտանիք կատարելապէս անկախ էր մնացեալ աշխարհից։ Եթէ մէկ գեղեցիկ օր, իւր շուրջն ամբողջ աշխարհը կործանուէր, նա, միանգամայն միայնակ մնալով, ոչ մէկ բանի պակասութիւն չէր ունենայ և կը շարունակէր առաջուայ նման ապրել։

Այժմ տեսնենք ուէ՞ խոշոր գործարան։ Այստեղ բոլոր բանուորներն իրարից կախուած են, այնպէս որ, օրինակ, եթէ մեքենաների ուէ՞ իւղող յանկարծակի հիւանդանար և նրա տեղը բռնող ոչ ոք չլինէր, այն ժամանակ գործարանը կը կանգնէր և բոլոր բանուորները մէկ մարդու պատճառով ստիպուած կը լինէին ժամանակաւորապէս թողնել աշխատութիւնը։

Կամ արհեստը գործարանական արդիւնաբերութեան հետ համեմատենք։

Իւրաքանչիւր արհեստաւոր, որը մէկ ուէ՞ առարկայ է շինում, կարող ասել, որ այդ իրն իւր սեփական աշխատանքի արդիւնքն է։ Այնինչ ժապանակակից գործարանական բանուորը պատրաստում է առարկայի միայն մէկ աննշան մասը։

Օրինակի համար վերցնենք գնտասեղների պատրաստութիւնը, որը սրանից դեռ հարիւր տարի առաջ նկարագրել է Ադամ Սմիտը։ «Գնտասեղների պատրաստութեան աշխատանքը, — ասում է նա, — բաժանւում է 18 առանձին գործողութիւնների։ Մէկ բանուոր պղնձից թել է քաշում, երկրորդը՝ հարթում է այն, երրորդը՝ յղկում է, չորրորդը՝ բաժանում է

մասերի, հինգերորդն պատրաստում է ծայրը, որի վրայ պէտք է պնդացնել գնտիկը, վեցերորդը, եօթերորդն ու ութերորդը աշխատում են գնտիկի վրայ, մէկ յատուկ բանւոր գընտիկը պնդացնում է ասելի վրայ, մէկ ուրիշը սպիտակացնում է այն և, վերջապէս, մէկ բանւոր էլ գնտասեղները խրում է թղթի մէջ։ Ես տեսել եմ մէկ ոչ այնքան մեծ գործարան, ուր միայն տասն բանւորներ՝ ամենաաղքատ գործիքների միջոցով՝ օրական 48,000 գնտասեղ էին պատրաստում, այսինքն իւրաքանչիւրը 4,800 հատ։ Եթէ այդ բանւորներից իւրաքանչիւրն առանձին աշխատէր, առանց միւսների օգնութեան և առանց վարժ լինելու այդ աշխատանքի մէջ, դա հաւանականաբար չը պէտք է կարողանար պատրաստել 20 գնտասեղ էլ, գուցէ և ոչ մէկ հատ։

Ֆրասիացի տնտեսագէտ Մէյ-ը աշխատանքի բաժանման մէկ ուրիշ ևս աւելի զարմանալի օրինակ է բերում, — խաղաթղթերի արտադրութիւնը։ Նա ասում է, որ իւրաքանչիւր թուղթը ենթարկւում է 70 տեսակ գործողութիւնների։ Մէկ քանի բանւորներ թղթեր են պատրաստում, միւսները՝ դրանց համար ներկեր, ուրիշները թղթի երէք թերթիկներն իրար կպցնելով են զբաղւում, որոնցից բաղկանում է խաղաթուղթն ու գնում են մամուլի տակ։ Մէկ քանիսը ներկում են խաղաթղթերի յետևի կողմը, միւսները սև ներկով պատկերներ են տպում, ուրիշները դրանք

ներկում են, մէկ քանիսն էլ արդէն նկարուած խաղաթղթերը չորացնում։ Խաղաթղթերի կըտրատելը կազմում է որոշ բանւորների զբաղմունքը, միւսները բացառապէս զբաղուած են խաղաթղթերը կապոցիկների համար դարսելով և այլն։ Աշխատանքի այդպիսի բաժանման նշանակութիւնը մեծ է։ Մենք տեսանք խաղաթղթերի գործարանն, ուր աշխատում էին 30 բանւոր, որոնք միասին պատրաստում էին օրական 15,500 խաղաթուղթ, այն է, իւրաքանչիւրը 500-ական խաղաթղթից աւելի։

Եթէ իւրաքանչիւր բանւորինքը ստիպուած լինէր կատարել բոլոր 70 գործողութիւններն, այն ժամանակ նա երկար տարիներ պէտք է սովորէր բոլոր այդ աշխատութիւններն և վերջի վերջոյ չըպէտք է կարողանար, հաւանականաբար, օրական նոյնիսկ երկու խաղաթուղթ պատրաստել։

Սակայն Սմիթի և Մէյի օրերից շատ տարիներ են անցել։ Արդէն այն ժամանակ էլ բանւորը կատարում էր աշխատանքի մէկ փոքր մասը, որը հարկաւոր էր գնտասեղի կամ խաղաթղթի պատրաստութեան համար։ Այժմ բանւորի աշխատանքն աւելի ևս ապահովուած է։ Այժմ մէկ մեքենայ մետաղաթել է քաշում, միւսը կարում է այն, երրորդը ծայրերն է սրում և այլն, և այլն։ Մարդը միայն նիւթն է դնում նրա տակ և ջոկում քաշած կամ կըտրատած մետաղաթելը։ Այստեղ մեքենա՛ն է հարկաւոր մեքենային, իսկ մարդը նրանցից

իւրաքանչիւրի մէջ կատարում է միևնոյն միակերպ աշխատանքը, բայց նա ևս աւելի կախուած է մեքենայից, որովհետև պէտք է յարմարուէ նրա շարժումներին՝ բարձրացնել կամ իջեցնել ձեռքերը, մօտենալ կամ հեռանալ՝ նայած նրա անիւների շարժումներին։ Մեծ գործարանում բոլոր բանուորները կարծես մեքենայի օժանդակիչներն են կազմում և բոլորն էլ հաւասարապէս հարկաւոր են։

Բայց որպէս Սմիթի ժամանակների գընտասեղների գործարանի բանուորները, նոյնպէս և բանուորը ժամանակակից գործարանի, որը օգտուում է մեքենաներից, նայելով պատրաստի խաղալիքներին և գնտասեղին՝ չէ կարող ցոյց տալ թէ որտեղ է իւր և իւր ընկերների աշխատութիւնը։ Աւելի ևս նրա համար դժուար է այդ անել սեէ վիթխարի մեքենայի վերաբերմամբ, որի պատրաստութեան մէջ նա, իւր հարիւրաւոր ընկերների հետ և տասնեակ մեքենաների օժանդակութեանմբ, միաժամանակ մասնակցութիւն է ունեցել։

Կարո՞ղ է արդեօք մէկ առանձին բանուոր պահանջել, որ հաղարաւոր բանուորների ընդհանուր աշխատանքի արդիւնքը բացառապէս իւր սեփականութիւնը դառնայ։

Արդիւնաբերութեան գործարանական ձևը միայն մէկ գործարանի բանուորներին չէ, որ կապում է և մէկը միւսից կախումն առաջացնում։ Իւրաքանչիւր գործարան կապած է միւսների հետ, նրանց հետ որոնցից ինքը կամ

ստանում է հում նիւթ ու մեքենաներ, կամ որոնց տալիս է իւր արտադրութիւնները։ Այդ դեռ բաւական չէ։ Համարեա իւրաքանչիւր ազգ կախուած է միւսներից, որոնց տալիս է իւր արտադրութիւնները նրանցից ստացածի փոխարէն, և ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնն՝ արդիւնաբերութեան վերաբերմամբ՝ իրենից մէկ ամբողջութիւն է ներկայացնում, որի բաղկացուցիչ մասերն, առանձին ազգերը, սերտ կերպով կապած են իրար հետ և իրարից կախումի մէջ են գտնուում։

Բոլոր ազգերի այդ փոխադարձ կախումը օր—օրի վրայ մեծանում է։ Առաջ, երբ ճանապարհների պակասութեան և ապահովութեան բացակայութեան պատճառով յարաբերութիւնը պետութիւնների մէջ շատ դժուարին էր, — ձրգտում էին այն բանին, որ իւրաքանչիւր երկիր, իւրաքանչիւր վայր, ինքն արտադրէր բոլորն, ինչ հարկաւոր էր նրա բնակիչներին։ Այժմ, սակայն, իւրաքանչիւր երկրում արդիւնաբերում են միայն այն, ինչ թոյլ են տալիս տեղական պայմանները, մնացեալ իրերը ստացուում են ուրիշ երկրներից։

Մարդկութեան զարգացման պատմութեան այդ թռուցիկ ակնարկից մենք տեսնում ենք, թէ ինչպէս մարդկային ամբողջ կեանքը, արդիւնաբերութեան կերպերից կախում ունենալու շնորհով, փոփոխուում է։ Քանի դեռ երկրի մէջ գոյութիւն ունին միայն երկրագործներ,

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм

քանի դեռ երկաթուղիներ չը կան, պետութիւնը գոյութիւն չունէ. քանի դեռ իւրաքանչիւր համայնք կատարելապէս կտրած է մնացեալ աշխարհից և իւր առանձին սովորութիւնները, առանձին նիստ ու կացն ունէ, — մինչ այդ ժամանակ, աշխատանքի արդիւնքները կարող են դեռ առանձին արդիւնաբերողների պատկանել։ Բայց երբ երևան են գալիս խոշոր գործարաններ, — իսկ նրանց հետ միաժամանակ պէտք է երևան գան երկաթուղիներ էլ ապրանքների փոխադրութեան համար, — մարդիկ սկսում են մէկ տեղից միւս տեղն անցնել, աշխատանքի արդիւնքներն այլևս չեն կարող մէկ բանուորի պատկանել, և ահա ամբողջ աշխարհը կարծես մէկ ամբողջութիւն է ներկայացնում։

Դիտնականներն ապացուցանում են որ նոյն իսկ ընտանիքի, սեփականութեան կառավարութեան կերպերը փոխւում են՝ շնորհով աշխատանքի միջոցներից և արդիւնաբերութեան կերպերից կախած լինելու։ Ասենք մենք արդէն գիտենք, որ մանր, ձեռքի դազգահի վրայ աշխատող մարդկանց մէջ պէտք է ուրիշ կարգ—կանոն լինի, քան նրանց մէջ, որոնք աշխատում են խոշոր գործարաններում, ահագին մեքենաների մէջ։

Մարդու աշխատանքը միշտ ստեղծում է ոևէ արդիւնք՝ սեղան, մահուդ և այլն։ Այդ արդիւնքները ծախւում են։ Բնական է, որ հարց կառաջանայ, թէ ինչո՞ւ նրանք վաճառ-

ւում են այս և ոչ այն գնով։ Ցեռոյ, ինչպէս յայտնի է, միայն քիչ մարդիկ են, որ հացահատիկներ են արտադրում։ Դարձեալ հարց կ'առաջանայ. ապա ի՞նչպէս է, որ միւս մարդիկ հացահատիկ չ'արտադրելով կարողանում են նրանից օգտւել։ Իւր կարգին սեղան շինելու համար հարկաւոր են փայտ ու գործիքներ։ Ինչպէ՞ս են յետ ստացւում փայտի և գործիքների վրայ ծախսած դրամները։ Ինչո՞ւ համար իւրաքանչիւրը դրամներ է ընդունում և աշխատում է դրամ ձեռք բերել։

Այդ բոլորը հարցերին պատասխանում է ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ։ ՆԱ ՄԵԶ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Վերջ ի վերջոյ ինչպէս ամէն ինչ, այդ օրէնքները ժամանակի ընթացքում փոխւում են՝ կախած լինելով աշխատանքի գործիքներից և արդիւնաբերութեան կերպերից։

I

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՆՐԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Միայն մէկ քանի երկրներում, ինչպէս օրինակ, Հնդկաստանի պտղաբեր հովիտներում, բնութիւնը տալիս է մարդուն կիսով չափ ձրի այն բոլորն, ինչ հարկաւոր է նրա ապրուստը հոգալու համար։ Աղամաթզենիներ, հացի ծառեր և արմաւենիներ այնտեղ առատութեամբ են բուսնում և հրաշալի բերք են տալիս, համարեա, առանց ոչէ ջանքի մարդու կողմից. բացի այդ, տաք կլիման բնակիչներին հնարաւորութիւն է տալիս ապրել առանց զգեստի, իսկ ծառերի խիտ սաղարթը մարդուն անձրևից պահպանում է։

Ամէն մէկ երկրում էլ մարդ պէտք է շատ ջանք գործ դնէ, որ ապահովէ իւր գոյութիւնն. այստեղ վերջինս բացառապէս կախուած է նրանից, ինչ ստեղծում է մարդ իւր սեփական աշխատանքով։

Սակայն մարդկային հասարակութեանը մօտուց դիտենք։ Ընդհանրապէս, որ ամէն ինչ ձեռք է բերւում աշխատանքով, բայց ահագին զանազանութիւն կայ այդ աշխատանքի կերպերի մէջ, աշխատանքի՛, որը կատարում են

զանազան մարդիկ։ Մենք տեսնում ենք իշխանին, որի ամբողջ աշխատանքը կայանում է կառավարելու, հրամաններ տալու, զինուորական հանդէսներ կազմակերպելու և այլն մէջ. յետոյ տեսնում ենք զօրապետներին, որոնք ժամանակը զինուորական մարզանքների, զօրքը կառավարելու մէջ են անցկացնում. ապա տեսնում ենք մինիստրներին, որոնք ահագին քանակութեամբ աստիճանաւորների օժանդակութեամբ պետութիւն են կառավարում։ Բացի դրանից մենք դեռ հանդիպում ենք արդիւնաբերողներին ու վաճառականներին, որոնք ապրանքները մէկ տեղից միւս տեղն են փոխադրում և այդպիսով առևտրի միջոցով զարկ տալիս առարկաների փոխանակութեանը։

Շատ մարդիկ ձեռնարկում են այնպիսի գործերի որպիսիք են՝ ջրանցք փորելը, խճուղիներ և երկաթուղիներ անցկացնելն ու կամ դրանցում աշխատում են. այդ գործերը բոլորի համար էլ շատ օգտակար են, պակաս չեն տալիս նրանց աշխատութիւն, որոնք կատարում են դրանք։

Բայց աշխատանքի բոլոր վերոյիշեալ տեսակները զբաղեցնում են մարդկանց համեմատաբար աննշան քանակութեանը։ Մարդկանց մեծամասնութիւնն աշխատում է բնութեան հում արտադրութիւնների շահագործման կամ նրանց մշակման վրայ։ Այսպէս, հանքահաններն, երկրագործները, ձկնորս-

ներն, որսորդները, շահագործում են ու հաւաքում հում արտադրութիւններ. միւս բանւորներն էլ գործարաններում ու արհեստանոցներում, ջրաղացներում ու հացատներում զբաղուած են այդ հում արտադրութիւնների մշակութեամբ և հասարակութեանը տալիս են բոլոր մշակուած առարկաները։ Այդ առարկաները, եթէ նրանք պատրաստուած են ծախելու համար՝ կոչւում են ԱՊՐԱՆՔՆԵՐ։

Ապրանքները, ոչ միայն այն մարդկանց, որոնք անմիջական կերպով նրանց ձեռք բերելով ու մշակելով են զբաղուած, այլ և ամբողջ հասարակութեան պէտքերին բաւարարութիւն տալու համար են։

Այդ համեմատութիւնները մեզ հնարաւորութիւն են տալիս բոլոր աշխատաւորներին բաժանել երկու մասի՝ համաձայն նրանց զբաղմունքի բնաւորութեան։

Հում նիւթեր արտադրելով և նրանց մշակելով զբաղուած մարդկանց մենք կ'անուանենք ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ։ Դրանց են պատկանում՝ երկրագործները, ձկնորսները, որսորդները, արհեստաւորները ու գործարանական բանւորները։ Միւս բոլոր մարդկանց, որոնք մէկ ուրիշ օգտակար աշխատանքով են զբաղւում՝ մենք կանուանենք ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՏՈՒՑԱՆՈՂ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ։ Աշխատաւորների այս միւս, երկրորդ, մասը տեղափոխում է ապրանքներ կամ կատարում է բժիշկների, տեխնիկների, ուսուցիչների, գիտնա-

կանների նայլն պարտականութիւնները։ Որովհետև երկրորդ մասի աշխատաւորներն իրենք չեն արդիւնաբերում ապրանքներն, ուստի, ապրելու համար, նրանք պէտք է ապրանք արտադրող աշխատաւորներից, առաջիններից, ստանան արդիւնքի մէկ մասը, այն ծառայութիւնների փոխարէն, որոնք մատուցանում են նրանք առաջիններին։ Դա, ի հարկէ, հնարաւոր է միայն այն պարագայում, երբ ապրանք արտադրող աշխատաւորների աշխատանքն այնքան է արդիւնաւէտ, այսինքն այնքան զանազան օգտակար առարկաներ են արդիւնաբերում, որ, դրանք, ապրանքները, կը հանդիսանան աւելի շատ, քան հարկաւոր է այդ աշխատաւորներին իրենց սեփական գոյութեան համար։ Միայն շնորհով դրա, նրանք, առաջինները, կը կարողանան ազատ կամքով կամ ստիպուած արտադրած արդիւնքի մէկ մասը տալ այն միւս, երկրորդ մասին, որը հասարակութեանն ոչ թէ ապրանքներ, այլ անձնական ծառայութիւններ է առաջարկում։

II

ՇՔԵՂՈՒԹԻՒՆ

Առ հասարականհերքելի է համարում այն կարծիքը՝ թէ հարուստների շռայլութիւնը կամ շքեղութիւնն (luxe) աշխատաւոր դասակարգի համար հանդիսանում է բարեգործութիւն և վաստակի աղբիւր։ Պնդում են, որ եթէ հարուստները դադարէին իրենց աղջիկներին ու կանանց թաւիշ ու մետաքս հագցնել, եթէ նրանց բնակարանները զարդարուած չը լինէին ճոխ գորգերով, գեղեցիկ պատառներով, քանդակուած կահաւորութեամբ և պչրանքի հազարաւոր այլ առարկաներով, այն ժամանակ բանւորներից շատերը, որոնք այդ առարկաների պատրաստութեամբ են զբաղուած, չէին ունենայ աշխատանք և հետևաբար վաստակ ու ապրուստի միջոց։

Դրա համար շատերը հաւատում են նրան, թէ՝ հարուստների շքեղութիւնը կնպաստում է աղքատներին։ Կեանքի ժամանակակից պայմաններում այդ հայեացքը, դժբաղդաբար, շատերի կողմից հաստատութիւն է գտնում։ Աւելի մանրամասն խօսենք դրա մասին։

Ապրելու համար մարդիկ պէտք է արդիւնքներ ստանան, ուստի, այսպէս անուանուած, ԱՇԽԱՏԱՒՈՐ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ, այսինքն, ապրանքներ արդիւնաբերողները, պէտք է այդպիսի այնքան պատրաստեն, որ բոլորը կարողանան իրենց պահանջներին բաւարարութիւն տալ։

Տնտեսական ժամանակակից պայմաններում իւրաքանչիւրը իւր աշխատանքի յարմար վարձը ստանում է դրամով, որն իւր հերթին տալիս է ուրիշներին, խանութներում և վաճառանոցներում գնելով զանազան առարկաներ՝ անհրաժեշտ իւր և իւր ընտանիքի համար։

Վաճառանոցներում, մթերանոցներում, վաճառատներում և խանութներում դարսուած և ծախելու համար նշանակուած բոլոր ապրանքները՝ կազմում են բանւորների աշխատանքի արդիւնքը. հաւաքումը բոլոր ապրանքների՝ հանդիսանում է հասարակութեան բոլոր անդամների աշխատանքի արդիւնքը։ Ենթադրենք, որ իւրաքանչիւրն ուղարկում է այդ մթերանոցներն իւր աշխատանքի արդիւնքն ու դրա փոխարէն վերցնում է ընդհանուրի աշխատանքի արդիւնքի ոևէ մէկ մասը, որն արժէքի տեսակէտից համապատասխանում է մէկ օրուայ աշխատանքի վարձատրութեանը՝ դրամով։

Այն ժամանակ դուրս կը գայ, որ շքեղութեան առարկաներ արդիւնաբերող բանւորները համարեա ոչինչ չեն ստանում իրենց սեփական

արդիւնաբերութիւնից, այլ միայն օգտւում են այն առարկաներից, որոնք յայտնի են ընդհանուրի սպառման առարկաներ անունով։

Բոլոր սովորական մթերքներն, առանց որոնց մարդիկ չեն կարող ապրել, օրինակ՝ ուտելիք, շորեր, բնակարան, տնային կամ խոհանոցի կահասիներ՝ կը կազմէին այդ վաճառատներում մէկ առանձին բաժանմունք։ Այդ բաժանմունքից գործածութեան առարկաներ հաւասարապէս կըստանային ինչպէս նրանք, որոնք հանդիսանում են որպէս ապրանքներ արդիւնաբերողներ, նոյնպէս էլ նրանք, որոնք հասարակութեանը ծառայութիւններ են մատուցանում։ Այդ բաժանմունքը լցած կը լինէր բացառապէս ա՛յն բանւորների աշխատանքի արդիւնքով, որոնք զբաղւում են ընդհանուր գործածութեան առարկաների արդիւնաբերութեամբ։ Դա ապացուցանում է, որ նրանց աշխատանքի արդիւնաւէտութիւնն այնքան մեծ է, որ իրենց, արդիւնաբերածը բաւական է ոչ միայն իրենց այլ և ա՛յն բանւորների համար, որոնք շքեղութեան առարկաներ են արտադրում, այլ և ա՛յն աշխատաւորների համար, որոնք հասարակութեանը ծառայութիւններ են մատուցանում։

Շքեղութեան առարկաները վաճառատան մէջ կարող էին ուրիշ բաժանմունք կազմել։ Բայց չընայած, որ նա լցւէր էլ պէշրանքի առարկաներ արտադրող բոլոր բանւորների աշխատանքի արդիւնքներով, նրանցից, սակայն,

կ'օգտւէին բացառապէս ա՛յն հարուստ մարդիկ, որոնք, ասենք, կըսպառէին միևնոյն ժամանակ և բոլորին անհրաժեշտ առարկաները՝ վերցնելով վաճառատան առանձին բաժանմունքից միս, հաց և այլն։

Ենթադրենք այժմ, որ շքեղութեան իրերի պահանջն և հետևաբար նրանց արդիւնաբերելը՝ ժամանակաւորապէս դադարէր։ Այն ժամանակ այդ տեսակ առարկաների արտադրութեամբ պարապող բոլոր բանւորները, որպէսզի ապրելու հնարաւորութիւն ունենան, պէտք է դիմէին ընդհանուրի սպառման առարկաների արդիւնաբերութեանը։ Իրենց արտադրած առարկաները նրանք այժմ արդէն կ'ուղարկէին վաճառատան առանձին բաժանմունքն և իրենց աշխատանքի արդիւնքով ընդհանուրին անհրաժեշտ առարկաների քանակութիւնը կ'աւելացնէին։ Այդպիսով իւրաքանչիւրը կը կարողանար առաջւանից աւելի անհրաժեշտ առարկաներ ստանալ։

Կ'աշխատենք մէկ քանի օրինակներով բացատրել այդ։ Կանացի տուալէտների զարդարանքն, ուտելիք և խմելիքներն, որոնք միայն խնջոյքների համար են գործածւում, արաժեն, ասենք, հարիւր հազար։ Դա համապատասխանում է բանւորական համարեա 100000 սովորական օրերի։ Համարեա 330 մարդ պէտք է մէկ տարւայ մէջ աշխատէին (մօտ 300 օր) որ մէ՛կ գիշերւայ համար միայն սպառման առարկաներ պատրաստէին։ Այն ինչ այդ շքե-

ղութեան առարկաների արդիւնաբերութեամբ զբաղող բանւորների մեծ մասը կարիքի մէջ է ապրում, ցնցոտիներով ման գալիս։

Նուրբ փաթիսխայ գործող ջուլհակը յաճախ իւր երեխաների համար իսկ շապիկներ չէ ունենում. իւր աչքերն ամենանուրբ հաշիաների գործելու վրայ փչացնող հաշիագործը՝ սննդի պակասութեան պատճառով՝ մեռնում է աստիճանական մահով։ Մետաքս ու թաւիշ արդիւնաբերող աշխատաւորները ձմրան համար մէկ տաք հագուստ անդամ չունեն։ Դերձակներն ու կարանոցները, ծաղկեվաճառներն ու առևտուր անող կանայք՝ վաճառատներում համարեա կիսակուշտ են ապրում։ Այն ինչ, այդ մարդիկ պէտք է ուրախանան հարուստների շռայլութեան համար, որովհետև եթէ այդ շքեղութիւնը չը լինէր, նրանք առանց մէկ կտոր հացի կը մնային։ Եթէ, սակայն, վերոյիշեալ 330 մարդ մէկ տարուայ ընթացքում չթի, մահուդի և այլ անհրաժեշտ իրերի պատրաստութեամբ զբաղուէին, այն ժամանակ նրանց աշխատանքը ոչ միայն իրենց միջոց կը տար վայելուչ և պատշաճաւոր զգեստ ունենալ, այլ և նրանք այդ առարկաներից կը պատրաստէին այնքան, որ երկու անդամ աւելի մեծ թիւով մարդիկ կը կարողանային վայելուչ կերպով հագնուել։

Վերցնենք մէկ այլ օրինակ։

Հարուստ մարդն իր համար շինում է տուն, որն ամբողջ շէնքով, ենթադրենք, նրա վրայ

նստում է 300.000 ռուբլի։ Վերջինս՝ մէկ ընտանիքի համար միայն տուն շինելով և աւարտելով պարապող 1000 մարդու մէկ տարուայ աշխատանքին է հաւասար։ Ապա որքան հասարակ, բայց առողջապահական ու մեծ տընակներ կը կարողանան այդ մարդիկ մէկ տարուայ ընթացքում շինել։

Մենք պէտք է ընդունենք, որ շքեղութիւն ասած հասկացողութիւնը ճիշտ կերպով դժուար է որոշել։ Սրանից 50 տարի առաջ շքեղութիւն համարուած առարկաներն այժմ, շնորհով կատարելագործուած և թեթևացրած արտադրութեան, ընկել են ընդհանուրի գործածութեան մէջ։ Հաւանականաբար կարելի է ասել, որ շքեղութեան առարկաների մասսայական արդիւնաբերութեան աւելի մեծ քանականութիւնն ամենօրեայ գործածութեան իրեր են դառնում։ Վայրենի մարդուն սապոնի գործածութիւնը շքեղութիւն կը թուայ։ Դեռ, դժբաղդաբար, բանւորների մեծամասնութիւնը գրքեր ու լրագրեր կարդալը մէկ աւելորդ բան է համարում, իսկ արդիւնաբերողները նոյնպէս գիտական հետազօտութիւնների վրայ խնայողաբար են նայում։ Մենք, սակայն, շքեղութեան մասին մեր կարծիքից չենք հրաժարւում և շարունակում ենք կարծել, որ նա միշտ շատ քչերին միայն օգուտ տալու համար է։ Եթէ այնտեղ էլ ուր սապոնի և լրագրեր կարդալու պահանջ գոյութիւն չունէ, սապնագործներն ու գրաշարները պէտք է աշխատեն

եթէ ոչ բացառապէս, գոնէ գլխաւորաբար, քչերի համար, իրենց արտադրած առարկանե-րից քիչ օգտուելով։

Այդպէս մենք տեսնում ենք, որ եթէ բան-ւորների նշանաւոր մասը ստիպած չը լինէր շքեղութեան առարկաներ արտադրել, այն ժա-մանակ նրանց աշխատանքը կարելի կը լինէր ընդհանուր սպառման առարկաների արտադ-րութեան համար գործադրել։ բայց որովհետև այժմ, շնորհով մեքենաների գոյութեան, մար-դու աշխատանքն աւելի արտադրող դարձաւ, այսինքն, կարճ ժամանակում շատ օգտակար առարկաներ է արտադրում, ուստի նրանք ամ-բողջ հասարակութեան սպառման համար բա-ւական կը լինէին։ Աւելի լաւ և վայելուչ կեանքը բոլորի համար էլ մատչելի կը լի-նէր, իւրաքանչիւրն էլ հնարաւորութիւն կ'ու-նենար գիտական և էստէտիկական զարգա-ցում ստանալ։

III

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԷՔԸ

Ներկայումս, երբ իւրաքանչիւրը վաճա-ռում է իւր աշխատանքը (կամ, եթէ իւր հաշուին է աշխատում, աշխատանքի արդիւնքը) և ստացած դրամով գնում է այն, ինչ իրեն հարկաւոր է, միշտ հարց է առաջանում՝ որ-քա՞ն արժէ այս կամ այն ապրանքը։ Մենք խօսում ենք նոյնպէս նոր գիւտի, ընկերակ-ցութեան, տեղեկութեան, ծառայութեան ար-ժէքի մասին։ Մենք իւրաքանչիւր քայլափո-խում գործ ենք ածում արժէք խօսքն ու դրա համար պէտք է այդ բառի արտայայտութեան մասին լաւ գաղափար կազմենք։

Պէտք է փիլիսոփայ լինել, հասկանալու համար այն, ինչ մենք ամէն օր տեսնում ենք, — ասել է ժամանակին ֆրանսիացի մեծ փի-լիսոփայ Ռուսսոն։

Իսկապէս, աւելի դժուար է իմանալ այն, ինչ ամէն օր տեսնում ենք, որովհետև մարդ սովորում է այդ երևոյթներին և նրանց վրայ բոլորովին կանգ չէ առնում։

Ժամանակակից հասարակութեան հարստու-թիւնն ահագին քանակութեամբ ապրանքների մէջ է կայանում։ Հիմա գանք այն հարցին

թէ՝ ինչի՞ց է կախուած ապրանքների գնահատութիւնը։

Եթէ մենք ոչէ առարկայ ունինք, նրանից կարող ենք երկու կերպ օգտուել։ Մէկն՝ առարկային յատուկ, սովորական գործածութիւնն է, որը լինում է այն ժամանակ, երբ դա գործածում ենք մեր այս կամ այն պահանջին բաւարարութիւն տալու համար. միւս գործածութիւնն առարկայի բնոյթին օտար է և տեղի է ունենում այն ժամանակ, երբ մենք օգտուում ենք նրանից՝ որպէս փոխանակութեան առարկայից, այսինքն, եթէ այն չենք սպառում, այլ միայն մէկ ուրիշ առարկայի հետ փոխանակում ենք։ Օրինակի համար, կոշիկը կարող է գործածուել որպէս կոշիկ, ոտնաման, կամ՝ նոյնպէս մէկ այլ առարկայի հետ փոխանակելով։ Առաջին գործածութիւնը կը լինի բնական, իսկ երկրորդ դէպքում, չը նայած որ մենք օգտուում ենք կոշիկից, ո՛չ այն նպատակով, որին նա պէտք է ծառայէր, որովհետև նա պատրաստուած է հագնելու համար, բայց մենք մէկ ուրիշ առարկայի հետ ենք փոխանակում այն։

Այստեղ առաջ բերած զանազանութիւնը, առարկաների արժէքի մէջ նրանց գործածութեան (ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԷՔ) և փոխանակութեան (ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔ) դէպքում, որանից դեռ 2200 տարի առաջ ցոյց է տուել յոյն փիլիսոփայ Արիստոտէլը։ Բայց այն ժամանակ ա-

ռարկաների մեծ մասն արտադրում էր տեփական գործածութեան համար և միայն մնացած աւելորդն էր վաճառք հանում։ Այժմ բոլորը բացառապէս փոխանակութեան համար են արդիւնաբերում և դա, ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ նշանն է ցոյց տալիս։

Փոխանակութեան նպատակով արդիւնաբերած իւրաքանչիւր ապրանք, պէտք է ոչէ մէկին հարկաւոր լինի, պէտք է ոչէ պահանջի բաւարարութիւն տայ։ Ախր ոչ ոք չի վերցնիլ այն, ինչ իրեն բոլորովին հարկաւոր չէ, դրա համար էլ իւրաքանչիւր ապրանք պէտք է սպառողական արժէք ունենայ։ Միայն օգտակար առարկան է, որ ապրանք կը դառնայ։

Սակայն ամէն սպառողական արժէք ունեցող բան ապրանք չէ։ Լոյսը, օդը, ջուրը գետի մէջ՝ մարդկային պէտքերին բաւարարութիւն տալու համար են, բայց նրանք ապրանքներ չեն։ Այդ բոլորը լինում է այնպիսի քանակութեամբ, որ մատչելի են իւրաքանչիւրին՝ առանց ոչէ աշխատանքի ու ջանքերի։ Բայց հենց որ ջուրը վերցնում և քաղաք են բերում, այսինքն, միանգամ մենք, այդպիսով, նրա բերելու վրայ որոշ աշխատանք ենք թափում, այն ժամանակ արդէն մենք ջուրն այլ կերպ կը գնահատենք, որովհետև բացի բնական սպառողական արժէքից, նա աշխատանքի շնորհով ձեռք է բերել և՛ մէկ ուրիշ փոխանակութեան արժէք ու դառնալ է ապրանք։ Այդ-

պիսով, աշխատանքը, օգտակար աշխատանքը, փոխանակութեան արժէքի առաջին պայմանն է։

Այդ բանն օրինակով աւելի լաւ բացատրելու համար՝ բոլորից յարմարն է մէկ հասարակ դէպք վերցնել, այն է, փողի մասին չլսոսել, այլ ենթադրել որ վաճառքն ուղղակի ապրանքն ապրանքի հետ փոխանակելու միջոցով է կատարւում։

Ջուլհակը գործել է 20 արշին քաթան, որն իրեն հարկաւոր չէ, դերձակը հագուստ է կարել, որը նոյնպէս իրեն հարկաւոր չէ։ Բայց ջուլհակը հագուստի՛ կարիք ունէ, դերձակն էլ քաթանի՛։ Եւ ահա նրանք համաձայնելով, որ 20 արշին քաթանն այն արժէքն ունէ, ինչ որ ունէ հագուստն, իրենց ապրանքները փոխանակում են։

Ջուլհակը շարունակում է գործել և քաթանը փոխանակում է ուրիշ զանազան ապրանքների հետ, այսպէս, 20 արշին քաթանով նա սեղան է գնում, յետոյ այդքան քաթանով էլ գնում է 100 գրանքայ հաց, 40 չափ ածուխ և, վերջապէս, գիրք։

Իւրաքանչիւր փոխանակութեան ժամանակ փոխանակուող ապրանքների արժէքը պէտք է միատեսակ լինի, այսինքն 20 արշին քաթանը հաւասար լինի զգեստի, սեղանի, 100 գրանքայ հացի, 40 չափ ածուխի և, վերջապէս, գրքի՝ արժէքին։ Դրանից այսպիսի հաշիւ է դուրս գալիս՝

20 արշին քաթանը արժէ այնքան, որքան 1 զգեստը
20 » » » » « 1 սեղանը

20 արշ. քաթ. արժէ այնքան, որքան 110 գրան. հացը
20 » » » » » 40 չափ ածուխը
20 » » » » » 1 գիրքը։

Այդ բոլոր արդիւնաբերութիւնները մարդկային զանազան պահանջներին բաւարարութիւն տուող օգտակար առարկաներ են հանդիսանում։ Եւ թէև նրանց նշանակութիւնը զանազան է, ինչպէս զանազան է նիւթը, որից շինուած են, բայց բնութեան տուած ամբողջ նիւթի և մարդկային արդիւնաբերող աշխատանքի միաւորումն են ներկայացնում։

Այդ առարկաների զանազանակերպութիւնը՝ հնարաւոր է դառնում փոխանակութիւնն, որովհետև ոչ ոք զգեստը՝ զգեստի, քաթանը՝ քաթանի հետ չէր փոխանակիլ, աշխատանքի միայն զանազան անկախ կերպերի արդիւնքները կարող են փոխանակուել։

Եթէ ապրանքներին աւելի մօտից նայենք, մենք կը համոզուենք, որ քաթանի մէջ է գըտնւում աշխատանքը ջուլհակի, որը երկրագործի աշխատանքով արդիւնաբերած վուշը դառնալով գործուած. մենք կը համոզուենք, որ զգեստի մէջ է պարունակւում դերձակի և ջուլհակի աշխատանքը, նոյնպէս և անասնապահի աշխատանքով ձեռք բերուած բուրդը. կը համոզուենք, որ սեղանի մէջ է հիւսնի և փայտահատի աշխատանքը, որպէս և փայտը։ Հացի մէջ մենք գտնում ենք հացթուխի և ջրաղացպանի աշխատանքն ու երկրագործի աշխատանքով ձեռք բերուած հաճարը։ Ածուխի մէջ է

գտնում ածխափորի աշխատանքը, գրքի մէջ է նրա գրող հեղինակի աշխատանքը, որպէս և թղթի գործարանի բանուորի, գրաշարի և կազմարարի։

Աշխատանքի բոլոր այսեղ թուած կերպերը զգալապէս իրարից զանազանում են. հիւսնն իւր գործն ունէ, ածխափորն՝ իւր, գրողն էլ՝ իւր, բայց դրանց մէջ ընդհանուրն այն է, որ բոլոր այդ գործերը միակերպ՝ մարդու կողմից ջանք, մարդկային աշխատանք են պահանջում։ Որքան որոշ ու պարզ է աշխատութիւնը, այնքան քիչ ժամանակ է հարկաւոր մարդուն այն սովորելու համար. որքան դժուար, —այնքան շատ։

Եթէ մենք դառնանք այն ժամանակին, երբ երկրագործն ինքն էր իւր հացահատիկն աղում երկանքների վրայ և ինքն էր իւր ալիւրից հաց թխում, այն ժամանակ կը տեսնենք, որ վուշը տանն էին մանում և ոչ գործարանում, որ զգեստները նոյնպէս տանն էին կարում։ Ուստի այն ժամանակ միևնոյն մարդը և՛ երկրագործ էր, և՛ չրաղացպան, և՛ հացթուխ, միևնոյն մարդը նախ երկրագործի աշխատութիւնն էր կատարում, յետոյ ջուլհակի և, վերջապէս, դերձակի։ Ըստինքեան հասկանալի է, որ նոյն այդ մարդն էլ անտառում փայտ էր կտրում և ինքն իրեն համար խրճիթ կառուցանում. հետևաբար նա միաժամանակ փայտահատ էլ էր, հիւսն էլ, ատաղձագործ էլ։ Մէկ խօսքով, այն ժամանակ միևնոյն մարդը կատարում էր զանազան գործեր, որոնքմ այժ

մեզ թւում են մէկը միւսին կատարելապէս անհամապատասխան։ Սակայն դրանից պարզ երևում է որ, երբ միևնոյն մարդը կարող էր այնքան զանազան գործեր կատարել, այդ բոլոր գործերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարդկային բանուորական ոյժի միևնոյն կիրառութիւնը։

Մեր վերոյիշեալ բոլոր ապրանքների՝ քաթանի, զգեստի, սեղանի՝ մէջ գտնում է միևնոյն մարդկային աշխատանքը։ Առանձին ապրանքների մէջ եղած զանազանութիւնը գտնում է միայն գործադրած աշխատանքի չափի մէջ. սեղան չինելու համար հարկաւոր է 20 անգամ աւելի աշխատանք, քան մէկ արշին քաթան գործելու համար. նոյնպէս և 20 արշին քաթան գործելու համար հարկաւոր կը լինի 20 անգամ աւելի աշխատանք, քան մէկ արշին քաթան գործելու համար։ Եթէ ես ասեմ, որ 20 արշին քաթանն արժէ այնքան, որքան մէկ սեղանը, դա կը նշանակէ, որ սեղանի պատրաստութեան համար պէտք է գործադրել այնքան ջանք, այնքան մարդկային աշխատանք, որքան 20 արշին քաթան գործելու համար*)։ Որ հիւսնի

*) Ցայտնի է, որ իրար հետ համեմատել կարելի է միայն նոյնատեսակ առարկաները։ Եթէ համեմատելու լինենք այնպիսի զանազան իրերը, որպիսիք են՝ քաթան եւ գիրք՝ դա կարելի կը լինի անել՝ համեմատելով միայն այն կէտը, որը նրանց մէջ ընդհանուր է, այն է, — նրանց մէջ գտնուած մարդկային աշխատանքը։

աշխատանքը զանազանում է ջուլհակի աշխատանքից, դա մեզ համար այժմ կարևոր չէ։ Մենք գիտենք, որ այդ երկու գործերն էլ միակերպ պահանջում են մարդկային աշխատանքի գործադրութիւն և դրա հիման վրայ այդ աշխատանքից դուրս եկած առարկաներն էլ համեմատում ենք։

Այդպիսով, փոխանակութեան արժէքի հիմքը, որը կրում են բոլոր ապրանքները, նրանց մէջ գտնուած ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ է։

Բոլոր ապրանքները ընդհանրապէս ոչ միայն փոխանակութեան արժէք, այլ և այդ փոխանակութեան արժէքի մէկ որոշ չափ են կրում։ Բանը նրանում է, որ մէկ ապրանք մեծ արժէք ունէ, մէկ ուրիշը՝ պակաս։ Որովհետև փոխանակութեան արժէքի հիմքը հանդիսանում է աշխատանքը, ուստի ապրանքների մէջ, համաձայն իրենց առաւել կամ պակաս արժէքի, պէտք է մարդկային աշխատանքի առաւել կամ պակաս չափ պարունակ է։

Ապա ինչո՞վ է չափւում աշխատանքը։ Աշխատանքը կարելի է առարկայի արտադրութեան վրայ գործադրած ԺԱՄԱՆԱԿՈՎ չափել։ Այդպիսով կարելի է որոշել, թէ քաթանի մէջ ջուլհակի քանի ժամւայ աշխատանքն է գտնւում և զգեստի մէջ էլ դերձակի քանի՛ ժամւայ աշխատանքը։ Այնուամենայնիւ ջուլհակի աշխատութիւնը նման չէ դերձակի աշխատութեանը. աւելի հեշտ է սովորել երկրագործի աշխատութիւնը, քան թէ գիտնականինը կամ

գրողինը։ Ջուլհակ կամ հիւսն դառնալու համար, հարկաւոր է որոշ ժամանակ դրանք սովորելու։ Ուստի ջուլհակի կամ հիւսնի աշխատանքի իւրաքանչիւր ժամի մէջ գտնւում է մէկ մասն ա՛յն ժամանակի, որը նա գործադրել է արհեստը ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ վրայ։ Նշանակում է հիւսնի աշխատութեան մէկ ժամն աւելի դժւար է, քան գիւղացի բատրակի*) աշխատութեան մէկ ժամն, որն ոչ մէկ կարիք ունէ գործն ուսումնասիրելու համար։ Այդ զանազանութիւնն աւելի պարզ կ'երևայ, եթէ մենք վերցնենք գիտնականի աշխատանքը։ Վերջինս ընդհանուր զարգացում ձեռք բերելու համար ամբողջ տարիներ է գործադրել, ապա ստիպւած է եղել ամբողջ ամիսներ էլ փչացնել մասնագիտորէն ուսումնասիրելու առարկան՝ շարադրելու համար մէկ գիրք, որի գրելը պահանջում էլ լինի հէնց մէկ քանի օրւայ աշխատանք միայն։ Հէնց այդ մէկ քանի ժամերում էլ մտնում են սակայն, միւս, բոլոր ժամերն այն ամբողջ աշխատանքի, որ առաջ գործադրւած էր գիտական զբաղմունքների վրայ։ Ուստի գիտնականի աշխատանքի մէկ ժամը հաւասարւում է, ասենք, մարդկային տասն ժամւայ սովորական աշխատանքին։

Մենք այժմ պէտք է ուշադրութիւն դառնանք այն աշխատանքի վրայ որը ԸՆՏՐՈՎԻ**)

*) Ռուս ընչազուրկ գիւղացի

**) Квалифицированный Ծ. Թ.

է կոչւում, և այն բանի վրայ թէ նա ինչո՞վ է տարբերւում սովորական աշխատանքից։ Աշխատանքն, որ իւրաքանչիւր առողջ մարդ կարողանում է կատարել՝ առանց նախնական պատրաստականութեան՝ համարւում է ՍՈՎՈՐԱԿԱՆ աշխատանք։ Մնացեալ իւրաքանչիւր աշխատանք, որ պահանջում է սովորելու առաւել կամ նուազ երկարատև ժամանակ, անւանւում է ԲԱՐՁՐ կամ ԸՆՏՐՈՎԻ աշխատանք։ Բարձր աշխատանքը միևնոյն ժամանակի ընթացքում արտադրում է աւելի փոխանակութեան արժէք, քան սովորական աշխատանքը։ Մենք այդ բանը կարող ենք տեսնել օրինակով։

Ենթադրենք, որ ոևէ մէկին յանձնարարւած է մէկ շատ բարդ գործիք շինել և որ երկար անցնող փորձերից յետոյ, եռամեայ աշխատանքից յետոյ, նրան վերջապէս աջողւում է այդ պատուէրը կատարել։ Այդ դէպքում մենք հաստատապէս կարող ենք պնդել, որ այդ առարկայի մէջ պարունակւում է եռամեայ բանւորական ժամանակ և հետևաբար նա էլ եռամեայ աշխատանքի արժէք ունէ։

Եթէ փականագործական արհեստանոցում փոխ-վարպետին սովորելու համար հարկաւոր է երեք տարի, որ յետոյ կարողանայ փականք շինել, այն ժամանակ, կարծես նա իրաւունք կունենայ ասելու, որ իւր շինած փականքի մէջ է իւր եռամեայ աշխատանքը։ Բայց մեր փոխ-վարպետը չէ բաւականում միայն մէկ փականք պատրաստելով, այլ շարունակ նորերն է շի-

նում։ Ենթադրենք, որ մեր փականագործը, երեք տարի սովորելու շնորհով, հասաւ այն կէտին, որ կարողանում է կէս օրւայ մէջ էլ մէկ փականք շինել։ Այդ դէպքում չէ կարելի ասել, որ իւր շինած առաջին փականքի մէջ է դնում սովորելու համար գործադրած երեք տարւայ աշխատանքը։ Յետագայ փականքների մէջ էլ ուրիշ ոչինչ չկայ, բացի մէկ փականքի պատրաստութեան համար անհրաժեշտ բանւորական ժամանակից (կէս օր)։ Ընդհակառակը, փականագործի շինած փականքներից իւրաքանչիւրի մէջ՝ բացի մէկ փականք շինելու համար անհրաժեշտ ժամանակից՝ պարունակւում է և՛ արհեստը սովորելու համար նրա գործադրած ժամանակի մէկ մասը։ Ինչպէս է այդ մասը՝ դժւար է որոշել, որովհետև յայտնի չէ թէ մեր փականագործը իւր կեանքում քանի՞ փականք է շինում, մենք միայն անորոշ կերպով կարող ենք ասել, որ մէկ յայտնի մասպէտք է այստեղ լինի։ Այդպիսով, իւր արդիւնաբերութեան համար՝ օրինակ 6 ժամ՝ պահանջող փականքի մէջ էլի պարունակւում է ժամանակի մէկ ուրիշ, աւելորդ մաս, ենթադրենք 1 ժամ, որով կաղմւում է 7 ժամ։ Ուստի իւր 6 ժամւայ աշխատանքի ընթացքում փականագործը կարող է աւելի շատ շինել, քան նոյն 6 ժամւայ ընթացքում մէկ հասարակ բանւոր, որը նախնական պատրաստականութեան համար ժամանակ չէ վատնել։

Այդպիսով, աշխատանքի զանազան կեր-

պերը՝ կարելի է միևնոյն ընդհանուր–մարդկային աշխատանքի առաւել կամ նուազ չափին հասցնել։ Ահա ընդհանուր–մարդկային սովորական աշխատանքի հէնց այդ քանակութիւնը գտնուում է ապրանքի մէջ և կազմում արդիւնքի փոխանակութեան արժէքը։ Այդ արժէքը չափում են ժամանակով։

Այժմ ենթադրենք թէ, մեր ջուլհակը 20 արշին քաթան գործելիս հանգստանում է և դրա համար էլ գործը սովորականից երկու անգամ աւելի ժամանակից յետոյ է վերջացնում։ Բայց եթէ նա դրա համար դերձակից երկու զգեստ պահանջէր, այն ժամանակ, հաւանականաբար, այսպիսի պատասխան կըստանար՝ «ինձ համար միևնոյն է, թէ դու այդ գործի վրայ քանի ժամ ես գործադրել, ես գիտեմ որ սովորական աշխատանքի միջոցին, առանց ընդմիջումների, այդ գործն ԱՅՍՔԱՆ ժամերի ընթացքում կարելի է վերջացնել, ուստի քո 20 արշին քաթանը միայն այն արժէքն ունէ, ինչ որ կունենար՝ եթէ նա պատրաստուած լինէր հէնց այդ ժամանակում։ Իմ գործը չէ, թէ դու քո ծուլութեան պատճառով երկու անգամ աւելի ես աշխատել»։

Այժմ հակառակը, ենթադրենք որ մեր ջուլհակը երկու, երեք անգամ աւելի եռանդով է աշխատում և այդպիսով իւր քսան արշին քաթանը կարողանում է գործել, ասենք, երեք քառորդի ընթացքում այն ժամանակի, որն իրեն հարկաւոր էր առաջ այդ աշխատութեան

համար։ Հարց է առաջանում, այդ 20 արշին քաթանի մէջ ընդհանուր մարդկային աշխատանքի բանուորական ժամանակի աւելի քիչ չափ չէ՞ պարունակւում։ Մեր ջուլհակը իւր քաթանը աւելի էժան չը պէտք է ծախէ։ Ոչ. նա այսպէս կը մտածէ՝ «եթէ ես պէտք է ծուլանամ ու աւելի դանդաղ աշխատեմ, այն ժամանակ ոչ ոք հաշիւ չի անէ այն, որ ես այդ կտոր քաթանի արդիւնաբերութեան վրայ աւելի շատ ժամանակ եմ գործադրել՝ քան հարկաւոր էր. ընդհակառակը, ինձ կ'ասեն, որ մէկ այդպիսի կտոր ՍՈՎՈՐԱԲԱՐ աւելի քիչ ժամանակում է գործւում։ Ես միայն ընդհանուր մարդկային միջակ աշխատանքի աւելի կարճ ժամանակի համար վարձատրութիւն կըստանամ։ Այժմ էլ, երբ, շնորհով եռանդի և լարուածութեան, ինձ աջողւեց մի քիչ աւելի գործել, քան գործում է մէկ այլ աշխատաւոր հէնց այդ ժամանակի ընթացքում, իմ մէկ կտոր քաթանը պէտք է սո՛վորական կերպով գնահատեն, այսինքն, այնպէս, որպէս, թէ նրա վրայ բանուորական ժամանակի սո՛վորական քանակութիւն է գործադրուած։ Նշանակում է, չընայած նրան, որ ես աւելի քիչ ժամանակ եմ աշխատել, ինձ կը վարձատրեն սո՛վորական կերպով»։ Մեր ջուլհակը կատարելապէս ճիշտ է ասում, որովհետև հարցը նը-րանում չէ, թէ իւրաքանչիւր առանձին անձնաւորութիւն մէկ որոշ ապրանք պատրաստելու համար, որքան ժամանակ է պահանջում։

Ապրանքի փոխանակութեան արժէքը մէկ առանձին անձնաւորութեան գործադրած ժամանակով չէ չափւում, այլ նրանով, որը գործադրում է ամէն մէկ միջակ մարդ միջակ եռանդի և միջակ արագաշարժութեան դէպքում։ Խնդիրը բացառութեան, առանձին անձնաւորութիւնների մասին չէ, այլ ընդհանրապէս բոլորի մասին, և ուստի այն ժամանակը, որը միջին կերպով անհրաժեշտ է մէկ յայտնի ապրանքի պատրաստութեան համար՝ անուանւում է ապրանքն արդիւնաբերելու համար հասարակական անհրաժեշտ ժամանակ։

Հարկաւոր է դեռ ուշադրութիւն դառնել այն բանի վրայ, որ սեղանի, քաթանի, զգեստի և իւրաքանչիւր այլ ապրանքի պատրաստութեան համար անհրաժեշտ ժամանակը ոչ միայն բանւորի ջանասիրութիւնից և արագաշարժութիւնից է կախւած այլև, — այդ գլխաւորաբար, — աշխատանքի գործիքների, մեքենաների և այլն կատարելագործւած լինելուց։ Իսկ այդ գործիքները կապւած են հասարակութեան ընդհանուր դրութեան հետ և մէկ առանձին անձնաւորութեան կամքից չեն կախւած։

Փայտը ձեռքի սղոցով կտրատող գիւղացին՝ իւր աշխատութեան վրայ աւելի շատ ժամանակ է վատնում, քան շոքեմեքենայից օգտւող հիւսնը, դրա համար էլ գիւղացին աւելի շատ կ'աշխատէ սեղանի պատրաստութեան համար, քան հիւսնը։ Գիւղական ջուլհակը մէկ կտոր քաթանի վրայ աւելի երկար է աշխատում, քան նա, որ շոգեմեքենայ ունէ։ Ձեռքի աշխատանք գործադրող գրաշարն աւելի շատ ժամանակ է վատնում, քան նա, որը շոքեմեքենայ ունէ։ Հետևաբար, այն գործիքներն, որոնցով աշխատութեան ժամանակ օգտւում են, որքան կատարեալ լինին, այնքան աշխատանքն արդիւնաւէտ կը լինի, ուրիշ խօսքով, — իւրաքանչիւր առարկայի մէջ աւելի քիչ աշխատանք կը լինի։ Այն ժամանակը, որը մէկ յայտնի միջոցում տարածւած աշխատանքի գործիքների օրով հարկաւոր է մէկ յայտնի ապրանք արդիւնաբերելու համար՝ անուանւում է բանւորական անհրաժեշտ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ժամանակ։ Այն րոպէից, երբ աշխատանքի նոր և աւելի լաւ գործիքներ կը հնարւեն ու կը դառնան ընդհանուրի գործածութիւն, մէկ խօսքով, երբ հասարակութիւնը հնարաւորութիւն կունենայ ապրանքներն աւելի կարճ ժամանակամիջոցում արդիւնաբերելու, քան առաջ, — այդ րոպէից այս կամ այն ապրանքի արդիւնաբերութեան համար առաջ անհրաժեշտ ժամանակի չափը, քանակութիւնը՝ անհրաժեշտ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ժամանակ լինելուց դադարում է։ Արդիւնաբերութեան նոր, աւելի կատարելագործւած գործիքների օրով, այս կամ այն ապրանքի արդիւնաբերութեան համար ԱՆՀՐԱԺԵՇՏ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ժամանակը այլևս ուրիշ կը լինի։

Ենդադրենք այժմ, որ ջուլհակի մեքենան մէկ ժամում կարողանում է այնքան քաթան գործել, որքան ձեռքով գործում է ջուլհակը մէկ

ամբողջ օրւայ ընթացքում։ Վերջինիս վրայ այն ժամանակ կը նայեն, որպէս ծոյլ աշխատաւորի վրայ և նրա ամբողջ օրւայ ծանր աշխատանքը կը գնահատւէ այնպէս, որպէս մէկ ժամւայ աշխատանք՝ մեքենայի վրայ։ Ինչո՞ւ։ Որովհետև ամբողջ հասարակութեան մէջ արդիւնաբերութեան այնպիսի պայմաններ են տիրապետում, որոնք, աշխատանքի նոր գործիքների օրով (մեքենաների) միջակ ջանասիրութեամբ և միջակ արագաշարժութեամբ, պահանջում են միայն մէկ ժամ՝ կատարելու համար այնպիսի աշխատութիւն, որի վրայ ձեռքով գործող ջուլհակը վատնում է մէկ ամբողջ օր։

Բայց որովհետև աշխատանքի գործիքները, մեքենաները և այլն, աւելի և աւելի են կատարելագործւում, ուստի իւրաքանչիւր ապրանքի փոխանակութեան արժէքն էլ՝ միշտ միևնոյնը չէ մնում, այլ իջնում է։ Իջնում է նրա համար, որ ապրանքի արժէքը իւր վրայ գործադրած անհրաժեշտ—հասարակական ժամանակից է կախւած, այդ ժամանակն էլ մեքենաների կատարելագործելովը կրճատւում է։ Ուստի, դառնալ կրկնում ենք, խնդիրն այն բանւորական ժամանակի մասին չէ, որը այս կամ այն բանւորն իրապէս գործադրել է, այլ ԱՆՀՐԱԺԵՇՏ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ժամանակի մասին, այսինքն, որը՝ աշխատանքի աւելի լաւ գործիքներ գոյծածելով՝ հարկաւոր է ապրանքն արդիւնաբերելու համար։ Այդպիսով, կարելի

է ասել, որ աշխատանքի ամենալաւ գործիքների օրով ապրանք անդիւնաբերելու համար անհրաժեշտ ժամանակն էլ հէնց ԱՆՀՐԱԺԵՇՏ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ժամանակն է և որ նա՛ էլ է որոշում ապրանքի փոխանակութեան արժէքը։

Բայց մէկ հարց էլ կայ, որի վրայ պէտք է ուշադրութիւն դառնել։

Իւրաքանչիւր ապրանք իրենից ներկայացնում է մէկ առարկայ, որը մեր ոնէ պահանջին բաւարարութիւն է տալիս։ Ոչ ոքի հարկաւոր չէ անօգտակար մէկ առարկայ և դրա համար էլ այդպիսի առարկան ապրանք լինել չէ կարող։ Իւր անօգտակարութեան պատճառով ապրանք չ'եղած առարկայի արդիւնաբերութեան վրայ գործադրւած աշխատանքն՝ անօգտակար, զուր աշխատանք է։ Այդ դէպքում վատնած բանւորական ժամանակը այլևս չի լինի բանւորական անհրաժեշտ—հասարակական ժամանակ և առարկան, որի մէջ որ կայ այդ աշխատանքը՝ փոխանակութեան արժէք չի ունենայ։

Այժմ մենք պէտք է ցոյց տանք, որ գոյութիւն ունեն՝ ոչ միայն այնպիսի ապրանքներ, որոնք փոխանակութեան ոչ մէկ արժէք չունեն, որովհետև նրարց ոչ ոք չէ ուզում առնենալ, հետևաբար և փոխանակել, — այլև պատահում է, որ իսկապէս շատ օգտակար և անհրաժեշտ առարկաներ դառնում են անօգտակար և անպէտք, որովհետև այդ ապրանքների պահանջը կատարելապէս բաւարարութիւն

է ստացել և նրանք ոչ ոք չէ ուզում վերցնել։ Օրինակ, սեղանն ոչ միայն օգտակար ու հարկաւոր իր է, այլև տնային պիտոյքների համար ուղղակի անհրաժեշտ է։ Համարձակ կարելի է ասել, որ հաղարաւոր ընտանիքներ կ'ուզենային երկու երեք սեղան աւելի ունենալ քան այժմ ունեն։ Ենթադրենք սակայն, որ հիւսներն այնքան սեղաններ են շինել, որ իւրաքանչիւր ընտանիքի վրայ այժմեանից 50 սեղանով աւելի ընկնէր։ Իւրաքանչիւրի համար պարզ է, որ ոչ մէկ ընտանիք սեղանների մէկ այդպիսի քանակութիւն նոյնիսկ նէր էլ չէր ընդունէ, որովհետև չէին իմանայ ինչ անել։ Իսկ գնելու մասին հօ խօսք անգամ չէ կարող լինել։ Ցամենայն դէպս թող հիւսներն ասէին, — «Այդ սեղանների վրայ մենք ամենալաւ գործիքների օժանդակութեամբ և մինչև ջանասիրութեամբ ու արագութեամբ ենք աշխատել, ուստի և մենք պահանջում ենք, որ հասարակութիւնը դրանք սպառէ իրենց ԻՍԿԱԿԱՆ փոխանակութեան արժէքով»։ Ի՞նչ պատասխանել հիւսներին։ Ահա թէ ինչ կասենք նրանց՝ «եթէ դուք իւրաքանչիւր ընտանիքի համար շինէիք երկու, ամենաշատը՝ երեք սեղան, մենք ձեզանից շնորհակալ կը լինէինք նրա համար, որ դուք ձեր աշխատանքով հասարակութեան պահանջներին բաւարարութիւն կը տայիք։ Ամէն մէկ ընտանիքի համար երկու սեղան արդիւնաբերելու վրայ ձեր գործադրած ժամանակը, մենք սիրով կընդունէինք յօգուտ

հասարակութեան գործադրած, հետևաբար և բանուորական անհրաժեշտ—հասարակական ժամանակ։ Իսկ մենք ի՞նչ անենք այժմ ձեր բոլոր սեղանները։ Նոյնիսկ նրանք պահեստի համար էլ անկարելի է պահել, որովհետև այնպիսի մեծ վաճառատներ չկան։ Ձեր շինած իւրաքանչիւր 50 սեղանից առնուազն 47 հատն աւելորդ են, հետևաբար, անօգտակար ու անպէտք։ Ի՞նչու համար դուք իզուր այնքան աշխատանք էք թափել, այնքան անօգուտ գործ կատարել»։

Մօտաւորապէս այդ կը լինէր մեր պատասխանը հիւսներին և բոլորը մեզ հետ կըհամաձայնէին, որ հիւսներն անօգուտ գործ են կատարել։ Իսկապէս, իւրաքանչիւր ընտանիքի համար 47 սեղան պատրաստելու վրայ թափած աշխատանքն՝ անօգուտ է և, ընդհակառակն, իւրաքանչիւր ընտանիքի համար 3 սեղանի արդիւնաբերութեան վրայ գործադրած աշխատանքը օգտակար աշխատանք է։ Անօգուտ աշխատանքը՝ անհրաժեշտ—հասարակական չէ և դրա համար էլ փոխանակութեան արժէք չէ առաջացնում։

Ենթադրենք, որ 50 սեղան պատրաստելու համար հարկաւոր եր 50 բանուորական օր, այսինքն մէկ սեղան պատրաստելու համար հարկաւոր էր մէկ օրուայ աշխատանք։ Այդ դէպքում իւրաքանչիւր ընտանիքի համար սեղան պատրաստելու ժամանակ՝ այն է, մէկ ընտա-

նիքի համար գործադրած 50 բանուորական օրից, 47 անպէտք սեղան չինելու վրայ գործադրած 47 օրը՝ յայտնուում է անօգուտ աշխատանք։ Ուստի 50 սեղանի մէջ, որոնց մասին էլ որ խօսում ենք, միայն երե՛ք օրայ անհրաժեշտ–հասարակական աշխատանք և 47 օրայ էլ անօգուտ աշխատանք է պարունակուում։

Որովհետև միայն անհրաժեշտ–հասարակական աշխատանքն է ստեղծում արժէք, ուստի մեր 50 սեղանի մէջ արժէքի միայն այնպիսի չափ է պարունակուում, որպիսին կը լինէր, եթէ մէկ ընտանիքի համար երեքական սեղան միայն չինուած լինէր։ Թող հիւսներն իւրաքանչիւր 50 սեղանից 47–ը այրեն, — նրանք մնացած երեք սեղանի համար կըստանան այն բոլորի արժէքը։ Իսկ այժմ 50 սեղանի համար նրանք կը ստանան միայն այնքան, որքան երեքի համար։

Եթէ 50 սեղանն արժէ այնքան, որքան երեք սեղանը, այն ժամանակ այդ 50 սեղանից մէկը ո՞րքան պէտք է արժենայ։

50 սեղանը հաւասար է երեք օրայ աշխատութեանը, հետևաբար, մէկ սեղանը հաւասար է բանուորական 3/50–ական օրայ։

Նշանակում է, մեր օրինակով, իւրաքանչիւր առանձին արժէքը կախուած է ոչ միայն անհրաժեշտ–հասարակական ժամանակից, որը գործադրուած էր աշխատանքի ամենալաւ գործիքների և միջոց արագաշարժութեան ու ջանասիրութեան միջոցին, այլ այստեղ էլ պէտք

է ուշադրութիւն դառնել թէ այդ բանուորական ժամանակն իսկապէս հասարակական անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն տալու համա՞ր էր գործադրուած արդեօք։ Եթէ պահանջ չէ եղել ժամանակի այնպիսի չափի, որպիսին գործադրուած է, այն դէպքում կըստացուէ չարտադրող աշխատանք, որը ոչ մէկ արժէք չէ ստեղծում։

Այն, ինչ որ մենք ասացինք ապրանքների արժէքի մասին, կարելի է ծառայութիւնների արժէքին էլ վերագրել։

Ծառայութեան արժէքը նոյնպէս կախուած է դրա կատարելու համար անհրաժեշտ ժամանակից։ Հարկաւոր է սակայն ուշադրութիւն դառնել, որ մէկ որոշ ծառայութիւն հէնց կատարելը կարող է շատ կարճ ժամանակ տևել և մեծ ոյժ չըպահանջել, բայց դրա հանդէպ էլ պէտք է շատ աշխատանք թափել այդպիսի ծառայութիւններ մատուցանելը սովորելու համար։ Ուստի, մէկ որոշ ծառայութիւն կատարելու համար գործադրած ժամանակին պէտք է աւելացնել՝ նախնական աշխատութեան, նախապէս սովորելու՝ ժամանակը։ Դա կարելի է տեսնել, իմիջի այլոց, բժշկի մատուցած ծառայութեան օրինակում. բժշկի այցը կարճ ժամանակէ տևում, բայց նրան հասնում է որոշ վարձատրութիւն այն ժամանակի որը նա յատկացրել էր բժշկութիւնն ուսումնասիրելուն։ Բժշկի ծառայութիւնների արժէքը հետևեալ կերպով կարելի է հաշուել. բժշկութիւնը սովո-

ըելու համար հարկաւոր է 6 տարի գործադրել, որպէսզի յետոյ մէկ 30 տարուայ ընթացքում պարապէ, ուստի պարապմունքի իւրաքանչիւր 5 տարուան պէտք է աւելացնել սովորելու մէկ տարին։ Հետևաբար, բժշկական աշխատութեան 5 տարին ներկայացնում է 6 տարուայ սովորական արժէքն այդ աշխատանքի, որը կապուած է բժիշկի գործունէութեան մէջ սովորական կեանքի ՐԻՍԿԻ հետ։

Եթէ մեզանում, Եւրոպայում, միայն մէկ ուսումնարան լինէր, ուր սովորեցնէին և՛ բժշկութիւն, այն ժամանակ այդ դիտութիւնը կապուած կը լինէր մեծ դժուարութիւնների և ժամանակի մեծ կորուստի հետ, քան այժմ, դրա համար էլ բժշկի ծառայութիւնները պէտք է աւելի թանկ վարձատրուեն։

Ասենք նշանաւոր բժիշկներն իրենց ծառայութիւնների համար ստանում են աւելի շատ, քան արժէ. սակայն այստեղ առարկայի ՀԱՋԻԱԳԻԻՏՈՒԹԵԱՆ աղդեցութիւնն է երևում, որը տնտեսական կեանքի կանոնաւոր ընթացքը խանգարում է։

IV

ԴՐԱՄ ԵՒ ԱՐԺԷՔ։

Մենք արդէն գիտենք թէ ինչի՞ց է կախուած իւրաքանչիւր առարկայի արժէքը։ Երկու օգտակար առարկաներ, օրինակ՝ երկաթ ու քաթան, իրար հետ փոխանակելով մենք կը տեսնենք, թէ քանի գրանքայ երկաթ պէտք է տանք 20 արշին քաթանի հետ փոխանակելու համար։ Պէտք է երկաթի այնպիսի քանակութիւն առաջարկել, որի մէջ նոյնքան անհրաժեշտ—հասարակական աշխատանք լինի, որքան պահանջում է 20 արշին քաթանի գործելը։

Բայց այն, ինչ հասկանալի է մեզ համար, ինչ մենք կարող ենք իւրաքանչիւր փոխանակութեան մէջ տեսնել, — չէ կարող յայտնի լինել վայրենի ցեղերին, որոնք պատահական կերպով իրար հանդիպելով՝ փոխանակում էին իրենց արդիւնաբերութեան աւելորդը։ Այստեղ բացառապէս դէպքից էր կախուած, թէ մէկ ցեղը քանի անասուն կըտար փոխանակելու համար այն հասարակ գործիքների հետ, որոնք ինքը կ՚ուզէր ստանալ։ Քանակութիւնը կախ-

ւած էր կամ նրանից, թէ մէկ ցեղի արդիւ-
նաբերութիւնը, միւս ո՞ր ցեղին է աւելի հար-
կաւոր, կամ նրանից՝ թէ ո՛վ ո՛ւմ կը խաբէ
և այլն։

Սակայն աւելի լաւ գործիքների երևան
գալով և մարդկանց մէջ աշխատանքի բաժան-
ման մեծանալով զանազան ցեղեր սկսեցին զա-
նազան առարկաներ արդիւնաբերել։ Դրա շը-
նորհով իւրաքանչիւր ցեղ ստիպւած էր իւր
արդիւնաբերութեան փոխանակութեան տեղ՝
միւս ցեղերից կամ առանձին մարդկանցից
ձեռք բերել բազմաթիւ զանազան առարկա-
ներ։ Այդ փոխանակութեան յաճախ կրկնուելու
միջոցին, իւրաքանչիւր առարկայի քանակու-
թիւնն, որը տրւում էր միւսի որոշ քանակու-
թեան փոխանակութեան համար, իւր մեծու-
թեամբ սկսեց աւելի մշտական ու բոլորին ա-
ւելի յայտնի լինել։ Օրինակի համար, բացա-
ռապէս անասնապահութեամբ պարապող ցեղը,
յաճախ ստիպւած էր անասունը փոխանակելու-
րիշ շատ առարկաների հետ, որոնք ինքը չէր
պատրաստում։

Ասենք, մէկ անգամ նա մէկ գլուխ անա-
սունը փոխանակում էր 10 հատ կատարելա-
գործւած նետերի հետ, մէկ ուրիշ անգամ 2
գլուխ անասունը մէկ չափ ցորենի և, վերջա-
պէս, մէկ անգամ էլ 5 ղոյդ տրեխների հետ
և այլն։ Այդպիսով այդ ցեղն և այն անձինք,
որոնք նրան հանդիպում էին, որոշելով մէկ
ոևէ առարկայի արժէքը, սովորեցին համեմա-

տել այդ մէկ գլուխ անասունի արժէքի հետ
և հետևեալ հաշիւն անել՝

10 նետը արժէ	այնքան,	որքան	1	գլ. անաս.
1/2 չափ ցորենը	„	„	1	„ „
1 երիտասարդ ստրուկը		„	1	„ „
5 ղոյդ տրեխը	„	„	1	„ „

Այստեղ բոլոր օգտակար առարկաների ար-
ժէքը չափւում է մէկ գլուխ անասունի ար-
ժէքով։

Ժամանակի ընթացքում, երբ իւրաքան-
չիւր ցեղի ներքին կեանքում էլ սկսեցին աչքի
ընկնել զանազան արհեստներ, երևան եկան
մարդիկ, որոնք բացառապէս դերձակի, կօշ-
կակարական, հիւսնական և այլն արհեստներով
զբաղւելով՝ իրենց զանազան պահանջներին բա-
ւարարութիւն տալու համար ստիպւած էին ի-
րանց շինածները փոխանակել միւս մարդկանց
արդիւնաբերութեան հետ։

Այն ժամանակ դերձակը հետևեալ հաշիւը
պէտք է անէր՝

20 արշին քաթանը	հաւասար է		1	վէստոնի *)
10 դրանքայ թէյը	„	„	1	„
1 պահարանը	„	„	1	„
2 չարէք ցորենը	„	„	1	„

Այդպիսով կարծես վէստոնը նրա համար
դրամ լինէր, որով նա ամէն բան ձեռք էր
բերում։ Իր հերթին կօշկակարի համար դրամ
էր կօշիկները, հիւսնի համար՝ պահարանը և լն։

*) Суртюк

Ի հարկէ, այդ առարկաներից և ոչ մէկը կարող էր դրամի դերը խաղալ, որովհետև դա շատ անյարմարութիւնների դուռ կը բանար. օրինակ, եթէ 10 գրանքայ թէյին դերձակը մէկ վէստոն է տուել, ապա ի՞նչ պէտք է անէր այն ժամանակ, եթէ նա ուզենար մէկ գրանքայ թէյ միայն գնել։ Նա հօ չէր կարող վէստոնից մէկ կտոր կտրել, որովհետև այդ ժամանակ ոչ մէկ արժէք չէր ունենալ այն։ Բացի այդ, վէստոնը չէ կարելի երկար պահել, որովհետև նա կարող է շուտ փչանալ և իւր արժէքը կորցնել։ Հէնց այդ անյարմարութիւնները կը պատահէին և միւս թուած ապրանքների հետ էլ, եթէ նրանցից ուզենային դրամի պէս օգտուել։

Միայն ա՛յն ապրանքն է դրամ դառնում, որ կարող է մանրիկ մասերի բաժանուել, առանց իւր արժէքը կորցնելու և որը կարելի է երկար պահել։ Ոսկին էլ հէնց այդպիսի ապրանք է, որը ունի բոլոր այդ յատկութիւններն և ամէն տեղ էլ դառնալ այնպիսի առարկայ, որին հաւասարւում են միւս բոլոր ապրանքները, այսինքն, եղաւ ԴՐԱՄ-ԱՊՐԱՆՔ։

Սկզբում իւրաքանչիւր առարկայի արժէքն որոշւում էր մէկ յայտնի քանակութեամբ ոսկու արժէքով։ Այսպէս էին ասում. — „Մէկ վէստոնը երկու մսխալ ոսկի արժէ, մէկ պահարանը երեք մսխալ ոսկի արժէ և այլն»։ Ցետագայում, ամէն անգամ ոսկին մասերի չբաժանելու և չկշռելու, նոյնպէս և խաբէ-

բայութիւնից հեռու մնալու համար, որը դիւրութեամբ գրանում կարող է պատահել, — սկսեցին որոշ կշիռի և որակի դրամ կտրել։ Այդպիսով, եթէ ասենք՝ վէստոնը 10 ռուբլի արժէ, դա կը նշանակէ, որ նրանում պարունակւում է այնքան մարդկային աշխատանք, որքան գործադրւած է ոսկին շահագործելու և մշակելու վրայ որից չինւած է 10 ռուբլիանոց իմպերիալը *)։

Այժմ, դրամի տեղ գործածւող ոսկի ապրանքի գոյութեան օրով, իրեն համար անպէտք վէստոն ունեցող դերձակը, որը հացի կօշիկների, գրքերի և այլ առարկաների կարիք ունէ, այլևս չէր պէտք է որոնէ այնպիսի հացթուխ, կօշկակար կամ գրավաճառ, որոնց հարկաւոր լինէր իւր վէստոնը, որպէսզի դրա փոխարէն ստանայ նրանցից իրեն հարկաւոր առարկաները։ Նա միայն այնպիսի մարդ է որոնում, որին վէստոն է հարկաւոր և նրանից այնքան փող է ստանում, որքան արժէ այդ վէստոնը (մենք արդէն գիտենք՝ թէ ինչպէս է որոշում առարկայի արժէքը) և ստացած դրամով գնում է այն ամէնը, ինչ որ ուզում է՝ իւրաքանչիւր ապրանքին իւր գինը վճարելով։ Վերջի վերջոյ մեր դերձակը կըստանայ իւր վէստոնի փո-

*) Եթէ մենք ապրանքների համար ոչ թէ ոսկի ենք վճարում, այլ թուղթ, որը ոչ մեկ արժէք չունէ դա ընդունում են միայն այն պատճառով, որ գանձարանը, առաջին պահանջին էլ դրա համապատասխան քանակութեամբ ոսկի դրամ կըտայ։

խարէն՝ 20 գրանքայ հաց, սեղան, մէկ զոյգ ամոռ կամ գիրք։ Այդ բոլոր առարկաները միասին արժեն այնքան, որքան վէստոնը, այն է, այդ բոլորի պատրաստութեան վրայ նոյնքան մարդկային միջին աշխատանք է թափուած, որքան վէստոնի վրայ *)։

Հարկաւոր է յիշել, որ առարկայի փոխանակութեան արժէքը, — եթէ նա սովորական ապրանքների մէջ չէ արտայայտւում, այլ դրամի, — կոչւում է նրա ԱՐԺԷՔԸ։ Այդպիսով եթէ դերձակը իւր վէստոնից 10 ռուբլի է ստանում, ուրեմն կարելի է ասել, որ 10 ռուբլին վէստոնի արժէքն է։

---

*) Ի հարկէ վէստոնի մէջ պարունակւող աշխատանքի չափը որոշելու միջոցին, պէտք է աչքի առաջ ունենալ ոչ միայն դերձակի աշխատանքը, այլեւ երկրագործինը, որը հաւաքել է վուշը, ջուլհակների աշխատանքն, որոնք վուշը գործել են եւ դրա վրայ աւելացնել արդիւնաբերութեան գործիքների մէջ պարունակւած աշխատանքը, վուշը՝ ջուլհակի մօտ, քաթանը՝ դերձակի մօտ բերելու աշխատանքը եւայլն։

V

ԿԱՊԻՏԱԼ։

Վէստոնը 10 ռուբլով ծախող և այդ փողով պահարան գնող դերձակը, վերջ ի վերջոյ ստանում է մէկ առարկայ, որը նոյնպիսի արժէք ունէ, ինչպիսին իւր վէստոնը, ի հարկէ, եթէ նա այնքան աղնիւ է, որ ոչ ոքի չէ ուզում խաբել և այնքան ճարպիկ է, որ թոյլ չի տայ իրեն խաբել։ Միակ օգուտը, որը մեր դերձակը վէստոնը ծախելուց և պահարան գնելուց ստանում է, դա այն է, որ նա իրեն համար անպէտք առարկայից (վէստոն) ազատւեց և դրա փոխարէն իրեն համար օգտակար ապրանք (պահարան) ձեռք բերեց։ Նա, ի հարկը, կատարելապէս բաւական է, չընայած, որ բացի դրանից ուրիշ ոչինչ չէ շահել։

Սակայն ի՞նչ կ՛աներ մեր դերձակը՝ եթէ իւր վէստոնը գնող չըկարողանար ճարել։

Հիւանը պահարանը վէստոնի փոխարէն չէր տալ, ոչ էլ հացթուխը հացը, եթէ այդ վէստոնն իրենց հարկաւոր չը լինէր։ Նրանք իրենց ապրանքի վճարը փողով կը պահանջէին

և 20 վէստոն ունեցող դերձակը՝ քաղցածութիւնից կարող էր մեռնել։ Այժմ իւրաքանչիւրը կարող է այդպիսի դժուարին դրութեան մէջ ընկնել, եթէ նա պահեստի համար պահած փող չունէ։ Այդպիսով, իւրաքանչիւր մարդու համար անհրաժեշտութիւն է ներկայանում որքան կարելի է շատ փող ունենալ, որոնցով ամէն բան կարելի է ձեռք բերել։ Ոչ սեփական գործածութեան համար, այլ փոխանակութեան նպատակով, արդիւնաբերած առարկաների քանակութեան աճելով՝ այդ պահանջ օրէցօր մեծանում է, որովհետև իւրաքանչիւրը փողով ուրիշից աւելի մեծ քանակութեամբ առարկաներ է ձեռք բերում։

Բայց փո՞ղ որտեղից ճարել։ Ինչպէս յայտնի է, ոսկին հանքերից բանւորներն են հանում։ Բայց որովհետև ոսկու ամբողջ սարեր չեն կարող քաղցածին կշտացնել, մրսածին տաքացնել, դրա համար էլ ոսկեհանքերի բանւորները ստիպուած են իրենց ոսկին ուրիշ մարդկանց զանազան արդիւնաբերութիւնների հետ փոխանակել, օրինակ, հայի, մսի, վէստոնի, և այլն հետ։ Ի հարկէ իւրաքանչիւր ապրանքի համար նրանք այնքան ոսկի են տալիս, որքան հանում են անհրաժեշտ-հասարակական ժամանակում, որը գործադրուած է գնուող առարկայի արդիւնաբերութեան վրայ։ Այդպիսով դերձակը հանքատէրից իւր վէստոնի համար ոսկի է ստանում և այդ ոսկով հացթուխից հաց է գնում, հիւսնից սեղան և այլն։ Այդ օրինա-

կով դերձակը իւր շինածը ինքն է ծախում, նոյնն անում է հիւսնը, հացթուխը և այլն։ Եթէ միշտ այդպէս դուրս գար, եթէ իրենք արդիւնաբերէին և իրենք էլ ծախէին իրենց շինածները և դրանց համար ոսկին միայն իրենք ստանային, այն ժամանակ առանց գործի ոչ ոք չէր կարող ապրել։ Սակայն մենք գիտենք, որ իսկապէս այդպէս չէ լինում, շատ մարդիկ կան որոնք շատ ճոխ են ապրում և, սակայն, ոչինչ չեն անում, դա բղխում է նրանից, որ մէկ ուրիշ կերպով փող ձեռք բերող այդ մարդիկ, հնարաւորութիւն են գտել առանց իրենց կողմից աշխատանք թափելու դրա, փողի, քանակութիւնն ստիճանաբար մեծացնելու։ Այդ բանին ամենից առաջ կարելի է այս ճանապարհով հասնել։

Փողով ապրանքներ է գնում և ապա ծախում աւելի թանկ, — օգուտով։ Մարդիկ ըսկսում են ապրանքներ գնել ոչ թէ նրա համար, որ իրենց պահանջներին բաւարարութիւն տան, այլ բացառապէս այն նպատակով, որ այն կրկին ծախելով իր վճարածից աւելի ձեռք բերեն։

Դերձակն ու հիւսնը միևնոյն փոխանակութեան արժէք ունեցող ապրանքները փոխանակում են։ Վաճառականն էլ ծախելիս միշտ աւելի շատ է ստանում փող, քան նա ինքը վճարել է ապրանքին։ Այդպիսով, գնելը ծախելու համար նշանակում է՝ դրամի մէկ որոշ քանակութիւն տալ յետոյ աւելի ստանալու նը-

պատակով, — առանց ապրանքի արժէքը մէկ ուրիշ նոր աշխատանքով բարձրացնելու։

Եւ իրանք իրանց շատացող դրամներն էլ կազմում են ԿԱՊԻՏԱԼ։ Իհարկէ դրամի այդպիսի բազմապատկութեան ժամանակ ոչ մէկ արժէք չէ ստեղծւում։

Այդ բանը օրինակով ստուգելու համար, ենթադրենք, որ Պետրոսը Յովհաննէսից 100 ռուբլու քաթան է գնել ու Պօղոսին ծախել 110 ռուբլու։

Այդ համաձայնութիւնը կայացնելուց առաջ Պետրոսը 100 ռուբլի առձեռն դրամ ունէր, Յովհաննէսը 100 ռուբլու արժողութեամբ քաթան ունէր, իսկ Պօղոսը 110 ռուբլի առձեռն դրամ ունէր։ Այդ բոլոր երեքի մօտ միասին 310 ռուբլու արժէք կար։ Համաձայնութիւնը վերջացնելուց յետոյ Պետրոսը ունենում է 110 ռուբլի, Յովհաննէսը 100 ռուբլի, իսկ Պօղոսը ի հարկէ առաջուայ նման 100 ռուբլու արժողութեամբ միայն քաթան, որովհետև այդ քաթանի մէջ, ոչ մէկ նոր աշխատանք չէ դրուած։ Այդպիսով երեքն էլ 310 ռուբլու արժողութեան կունենան։ Ամբողջ զանազանութիւնը դրա մէջ նրանումն է, որ 10 ռուբլու արժողութիւնը Յովհաննէսի դրպանից Պօղոսի դրպանն է տեղափոխւել։ Դա կատարելապէս հասկանալի է, որովհետև իսկական արժէք միայն աշխատանքն է ստեղծում։ Մեր օրինակում ուրիշ ոչ մէկ աշխատանք չրկար (եթէ չրհաշուենք մէկ քանի արշին քաթանի

ծախելու և չափելու ժամանակի չնչին չանքը), և դրա համար էլ արժէքը չէր կարող բարձրանալ։ Պետրոսին աջողւեց 10 ռուբլի աշխատել, Պօղոսի դրպանից իւր սեփական դրպանը դնելով՝ բացառապէս շնորհով այն բանի որ նա իւր դրամները ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ դարձրեց։

Պետրոսը ի վնաս Պօղոսի աւելի հեշտութեամբ կարող կը լինէր իւր կապիտալը մեծացնել, եթէ նրան 100 ռուբլի տար, այն պայմանով, որ մէկ որոշ ժամանակ անցնելուց յետոյ նա իրեն վերադարձնէ պարտք տուած դումարը՝ 10 ռուբլի տոկոս վճարելով։ Այդ օրինակով, Պետրոսը իւր կապիտալը մեծացնելու համար արդէն բոլորովին ապրանք չէ գնում, որպէսզի յետոյ աւելի թանկ ծախէ, այլ ուղղակի Պօղոսից վերցնում է նրան պատկանած փողի մէկ մասն՝ այդպիսով իւր 100 ռուբլին ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ վերածելով։ Այս երկու դէպքում էլ առևտրական կապիտալը, ոչ էլ վաշխառուական կապիտալը, ոչ մէկ արժէք չեն ստեղծում, այլ միայն մէկ մարդու կարողութիւնը տեղափոխում են մէկ ուրիշի դրպանը։

Կապիտալն այն դէպքում միայն կարող կը լինի արժէք ստեղծել, եթէ նա վաճառանոցում լինէր և ձեռք բերէր առանձին տեսակի ապրանք, որն իրա մէջ արժէք առաջացնող ոյժ պարունակէր և որն այդ ոյժը սպառողի օգտին տար։ Սակայն ինչպէս յայտնի է արդ-

ժէք ստեղծող միակ ոյժը մարդու ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՈՅԺՆ է։ Ուստի, եթէ վաճառանոցում բանուորական ոյժը ծախւում է որպէս ապրանք և, առաջուն դրամ ունեցողը կը գնէ այն, — այդ դէպքում նա, ոյժը, նրա օգտին կաշխատէ և նրա համար նոր արժէքներ կըստեղծէ, որոնք աշխատանքի վարձը բարձրացնում են։ Որովհետև այլ կերպ կապիտալիստի համար միտք չունէր բանուորական ոյժ վարձել։ Միայն այդ դէպքում կապիտալը կարող է մնծանալ և իւրաքանչիւր 100 ռուբլու փոխարէն ստանալ 110 ռուբլու նոր և արդէն իսկական արժէք։ Դրան միայն նրանով կարելի է հասնել, որ կապիտալիստը որոշ վճարով վարձում է բանուորական ոյժ, ստիպում է նրան աշխատել իւր մօտ, իսկ արտադրած արդիւնքը ծախում է իր օգտին։

Թէ բանուորական ոյժի այդ սպառելը որպիսի պայմաններում է հնարաւոր դառնում և այդ, իր տեսակի մէջ միակ, ապրանքի արժէքը ինչից է կախւած, — մենք հետևեալ գլխում կը տեսնենք։

VI

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՈՅԺԸ ՈՐՊԷՍ ԱՊՐԱՆՔ

Նախընթաց խորհրդածութիւնները մեզ ցոյց տուին, որ իւրաքանչիւր առարկայ կարող է ապրանք դառնալ։ Այդ դէպքում անհրաժեշտ պայման է հանդիսանում, որ յայտնի առարկայի սեփականատէրն իրաւունք ունենայ աղատօրէն վարուել առարկայի հետ, որն ինքն ուզում է գործիքների հետ փոխանակել։ Անկասկած, առարկան ինքը, պէտք է սպառողական արժէք ունենայ, այսինքն, պէտք է որոշ պահանջների բաւարարութեանը ծառայէ, որովհետև հակառակ դէպքում ոչ ոք չի ուզենայ այն իւր օգտակար ապրանքի հետ փոխանակել։ Բացի այդ, յայտնի առարկան, որքան էլ օգտակար լինի, իւր տիրոջ համար պէտք է աւելորդ և նոյնիսկ անպէտք դառնայ, որովհետև ոչ ոք չի փոխանակիլ այնպիսի առարկայի հետ, առանց որի ինքը չէր կարող եօլայ գնալ։

Այժմ այդ բոլոր պայմանները թեթևա-

ցնում է բանուորական ոյժը, որ ինքն իրեն վաճառանոցում ծախւում է։ Դիտենք այժմ այն պատմական պայմանները, որոնց շնորհով բանուորական ոյժն ապրանք է դարձել։

Քանի դեռ գոյութիւն ունէր ստրկութիւնը մինչ այդ ժամանակ բանուորական ոյժի վարձման մասին խօսք անգամ չէր կարող լինել։ Այդ ժամանակ մարդն իւր բանուորական ոյժի հետ միասին ծախւում էր այնպէս, որպէս անասունն է ծախւում և, վաճառելուց յետոյ, ստրուկը գնողի լիակատար տնօրինութեան տակ էր ընկնում։ Այդպիսով ստրուկը համարւում էր ապրանք, իր, որը կարելի էր փոխանակել ուրիշ իւրաքանչիւր առարկայի նման, մէկ խօսքով նա կեանքի պարզեւած մէկ գործիք էր միայն։ *) Եւ ճորտատիրական ժամանակներում բանուորական ոյժը չէր կարող ապրանք դառնալ, ամբողջ տարւայ ընթացքում իւր տիրոջ մօտ աշխատելու ստիպւած աշխատաւորն իրաւունք չունէր իւր ուղածի պէս վարւել իւր բանուորական ոյժի հետ և դրա փոխարէն պահանջել վարձատրութիւն՝ համաձայն ապրանքների փոխանակութեան ընդհանուր կանոնների, նա աճող թանկութեան (ապրանքների) միջոցին աւելի բարձր վարձատրութիւն չէր կարող պահանջել։ Այդ տեսակէտից ճորտատիրական իրաւունքը քիչ էր զանազանւում ստրկութիւնից։

*) Այդպէս էր անւանում ստրուկներին յոյն փիլիսոփայ Արիստոտէլը։

Միայն այն ժամանակ, երբ աշխատաւորն անձի ազատութիւն ստացաւ և միւս մարդկանցից անկախ դարձաւ, նա անձամբ կարողէր իւր բանուորական ոյժից օգտւել իրեն համար կամ որոշ ժամանակով տալ ուրիշին։

Բայց մենք գիտենք, որ առարկան միայն այն դէպքում է ապրանք դառնում, երբ նա օգտակար է և դրա հետ էլ միասին իւր տիրոջ համար հարկաւոր չէ։ Դրա համար էլ բանուորական ոյժը, որի շնորհով ապրուստի բոլոր միջոցները ստեղծւում են, միայն այն ժամանակ է ապրանք դառնում, երբ նա դադարում է իւր տիրոջը օգտակար լինելուց, այսինքն, երբ այդ բանուորական ոյժի տէրն ինքն իսկ չէ կարող նրա օգտակարութիւնից շահել։ Իսկ մարդ միայն այն ժամանակ է կարող իւր բանուորական ոյժից օգտւել, երբ նա ունենում է դրա գործադրութեան համար նիւթ և աշխատանքի գործիքներ, որոնց օգնութեամբ նա կարողանար հում նիւթերից օգտակար առարկաներ շինել։ բացի այդ, արդիւնաբերութեան ընթացքում բանուորը պէտք է կերակուր, հագուստ, բնակարան և այլն ունենայ։ Եթէ բանուորական ոյժի տէրը հում նիւթեր, գործիքներ և այն ամէնը, ինչ հարկաւոր է գոյութեան համար՝ ունէ, նա իւր բանուորական ոյժն ուրիշին տալու մասին չէ էլ մտածում, որովհետև ինքն այդ բոլորը ունենալով՝ կարող է ապառողական նոր արժէքներ ստեղծել։

Քանի դեռ բանուորական ոյժի տէրը միա-

ժամանակ արդիւնաբերական գործիքների տէր էլ է՝ նրա բանւորական ոյժը չէ կարող ապրանք դառնալ։ Միայն ժամանակի ընթացքում այնպիսի յարաբերութիւններ են ստեղծւում, որոնց շնորհով բանւորը իւր ունեցած միակ սեփականութեան հետ, միակ ապրանքի հետ, որը նա կարող է փոխանակել՝ դրա տեղ ապրուստի համար անհրաժեշտ միջոցներ ստանալու, այսինքն՝ իւր բանւորական ոյժի հետ՝ ստիպւած է վաճառանոց գնալ և ի վաճառ հանել այն, ինչպէս ամէն մէկ ուրիշ ապրանք։ Եթէ իւր այդ ապրանքը բանւորին չէ աջողւում դրամի հետ փոխանակել և եթէ միևնոյն ժամանակ նա ապրուստի ոչ մէկ միջոց չունէ՝ նրան սով է սպառնում. հէնց այդ սովն էլ նրան ստիպում է համաձայնւել աշխատանքի այնպիսի պայմանների հետ, որոնք բանւորի անձի ազատութեան հետ խիստ ՀԱԿԱՍՈՒԹԵԱՆ մէջ են գտնւում։

Դրա հետ էլ պէտք է յիշել և հետևեալը. նախկին փոխ-վարպետը կարող էր յուսալ, որ արհեստը սովորելու իւր ժամանակը լրանալուց յետոյ, նա մէկ քանի հասարակ գործիքներ և էժանագին դաշղնամ գնելու համար հեշտութեամբ մէկ փոքրիկ կապիտալ կը հաւաքէ և կըսկըսէ իր տանն աշխատել ու օգտւել իւր բանւորական ոյժից բացառապէս իրեն համար՝ առանց ստիպւած լինելու ուրիշներին տալ այդ ոյժը։ Միթէ՞ ժամանակակից բանւորը կարող է սակայն գործարանի տէր լինելու մասին մտա-

ծել անգամ, որի մէջ նա աշխատէր և որը ձեռք բերելու համար տասնեակ և հարիւր հազարաւոր բուբլի է հարկաւոր։ Ակներև է, որ գոյութիւն ունեցող պայմանների մէջ ոչ միայն նա, այլ և նրա երեխաները միշտ վարձաւորներ կը մնան և ստիպւած կը լինեն իրենց բանւորական ոյժը ծախել։ Դեռ աւելին. նոյն իսկ նրանք, որոնք այժմ մանր արհեստանոցներում իրենց սեփական հաշւով են աշխատում, վաղը ստիպւած կը լինեն վաճառ հանել իրենց բանւորական ոյժը, որովհետև, գործարանների սաստկացող մրցման ճնշման տակ, արհեստներն ընկնում են և մանր արհեստանոցների սեփականատէրերը քայքայում։

Այդպէս, եթէ բանւորական ոյժն ապրանք է դարձել և, որպէս իւրաքանչիւր այլ ապրանք, կարող է ծախւել, այն ժամանակ մեզանում հարց է ծագում, — այդ ապրանքի արժէքը որքա՞ն է մեծ և վաճառանոցում բանւորական ոյժն ի՞նչ գնով է կարող ծախւել։

Մենք գիտենք, որ իւրաքանչիւր ապրանքի արժէքը իւր արդիւնաբերութեան համար գործադրած բանւորական անհրաժեշտ-հասարակական ժամանակի չափից է կախւած։ Ուրեմն բանւորական ոյժ արտադրելու համար ի՞նչն է անհրաժեշտ հանդիսանում։

Պատասխանը շատ պարզ է։ Որպէսզի բանւորական ոյժն ամէն օր երևայ վաճառանոցում, հարկաւոր է, որ իւր մէջ այդ ոյժը կրող և ի վաճառ հանող կենդանի մարդն առողջ լի-

նի։ Իսկ այդ անել կարող է միայն այն մարդը, որը բաւականաչափ կերակուր է սպառում, որը հանգստանալու տեղ ունէ, որը հագնելու բան ունէ, մէկ խօսքով, այն մարդը, որը իւր բոլոր անհրաժեշտ պահանջներին բաւարարութիւն է տալիս։ Ահա հէնց ապրուստի համար անհրաժեշտ ապրանքների այդ քանակութիւնը, — ինչ պահանջւում է ծախսած բանւորական ոյժի վերականգման համար, — որը բանւորին երկար աշխատելու հնարաւորութիւն է տալիս՝ որոշում է բանւորական ոյժի փոխանակութեան արժէքը։ Եւ եթէ բանւորը իւր աշխատանքի տեղ ուղղակի ապրուստի համար անհրաժեշտ առարկաների մէկ համապատասխան քանակութիւն ստանալու լինէր, նա հէնց այնքան կըստանար, որքան իրեն ապրուստի համար հարկաւոր է։ Բայց սովորաբար բանւորը վարձը ստանում է դրամով, որով իրեն համար անհրաժեշտ առարկաներ է գնում։ Հէնց փողի այդ գումարն էլ, որը իւր աշխատանքի համար ստանում է բանւորը, հանդիսանում է բանւորական ոյժի ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ. նա պէտք է բաւական լինի ապրուստի գէթ բոլոր անհրաժեշտ միջոցները գնելու համար։

Մարդու պահանջները չափազանց բազմատեսակ են՝ նայած յայտնի երկրի հասարակական և կլիմայական պայմանների առանձնայատկութիւններին։ Տաք երկրներում մարդը պակաս քանակութեամբ հագուստով և կերակրով, նոյնպէս և աւելի հասարակ բնակարանով է բաւականանում։ Դրա համար էլ այնտեղ աշխատանքի վարձն աւելի քիչ է։ Ընդհակառակն, աւելի սառն երկրներում մարդու մէջ բանւորական ոյժ պահելու համար՝ հարկաւոր է աւելի տաք հագուստ, աւելի առատ կերակուր և, բացի այդ, տաքութիւն։ Ուստի այնտեղ բանւորական ոյժի արժէքն անհրաժեշտօրէն մեծ է, որովհետև մարդ այնտեղ չէր կարող ապրել, եթէ նրա աշխատավարձը բաւական լինէր միայն այնպիսի կերակրի և շորի համար, որպիսին բաւական է տաք երկրների բնակչի համար։

Սակայն բացի աշխատավարձի մեծութեան վրայ ներգործող բնութեան այդ պայմաններից, բանւորին պահելու ապրուստի միջոցների համար անհրաժեշտ չափն ու որպիսութիւնը, հետևաբար և բանւորական ոյժի արժէքը՝ գլխաւորապէս կախւած է բանւոր դասակարգի սովորութիւններից պետութեան մէջ, նրա կըրթութեան և զարգացման աստիճանից։

Օրինակի համար, կեղևից պատրաստած տրեխները բանւորի, առաջ բոլորովին չը գործածած կաշէ կօշիկներից պակաս չեն։ Այժմ էլ կօշիկները կեանքի ընդհանուր—անհրաժեշտ առարկաներից մէկն են և բանւորը չէ համաձայնւում իւր բանւորական ոյժն այնպիսի գնով ծախել, որը նրան զրկէ կօշիկներ հագնելու հնարաւորութիւնից։ Ֆրանսիայում բանւորը պէտք է ամէն օր միս ուտենայ ուրագիր կարգայ։ Դրա համար էլ նա այնպիսի վարձ է

պահանջում. որն իրեն թույլ կըտայ այդ անել։

Բայց նոյնիսկ իւր օրգանիզմի բոլոր պահանջներին բաւարարութիւն տալով էլ, բանուորի ժամանակը ընթացքում ծերանում է, աստիճանաբար կորցնում իւր բանուորական ոյժը ու, վարչապէս, մեռնում։ Այդ մեռնող բանուորական ոյժի փոխարէն վաճառանոցում պէտք է ուրիշ, նոր, թարմ ոյժ երևան գայ։ Աշխատանքի մեծանալու շնորհով է, որ կարելի է հասնել բանուորական ոյժի այդ մշտական հոսանքին՝ վաճառանոցի վրայ։ Բանուորների հին սերունդը մեռնելով, յանձին իրեն ժառանգների թողնում է բանուորական ոյժի նոր կրողներ ու վաճառողներ։ Ուստի ապրուստի միջոցների չափը, որը հարկաւոր է բանուորական ոյժի ամենօրեայ վերականգման համար, պէտք է բաւականութիւն տայ դեռ երեխաների կրթութեանը, քանի դեռ նրանք իրենք չեն սկսել իրենց համար աշխատել։ *)

*) Այդպէս մենք տեսնում ենք, որ եթէ երեխաների աշխատանքն արգելած լինէր եւ երեխաները սկսէին աւելի մեծ հասակում աշխատել, այն ժամանակ բանուորի ընտանիքի աշխատավարձը չեր պակասէ, որովհետեւ այդ դէպքում հասակաւոր բանուորները պէտք է այնպիսի վարձ ստանային որը երեխաների կրթութեան համար էլ բաւական լինէր։ Ինարկէ դրանից ամբողջ հասարակութիւն կը շահէր, որովհետեւ բան որների երեխաներն ուսումնարանները սովորելու եւ իրենց ոյժերը կատարելապէս զարգացնելու հնարաւորութիւն կունենային։ Բանուոր

Բանուորական ոյժը, որը վաճառւում է և որից գնողը ժամանակաւորապէս շահում է, իրեն, բանուորի անձից չէ կարող բաժանուած լինել, ընդհակառակը նա գտնւում է բանուորի էութեան մէջ, նրա մկանների, երակների, ջղերի և ուղեղի մէջ։ Հետեւաբար բանուորական ոյժի վաճառումը մէկ տեսակ առժամապէս վաճառումն է նոյն իրեն, մարդկային անձի։ Բանուորական ոյժ գնողը, եթէ ուզում է նրանից շահ ստանալ, պէտք է բանուորի անձի վրայ իրաւունք ունենայ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ նրան սովորեցնել, թէ ինչ ուղղութեամբ և ինչ կերպ պէտք է նա գործադրէ իւր ոյժը, որը առժամապէս կապիտալիստի իրաւասութեան տակ է դրուած։ Այդ նպատակով էլ հաշուեգրքոյկներում առանձին տեղ է բանում իրեն՝ գործատուին «անպոյման հպատակելու» յիշատակութիւնը։ *)

Վարձուած բանուորը վայրկեան առ վայրկեան իւր բանուորական ոյժը ծախսում է. նրա բանուորական ոյժի որոշ մասը իւրաքանչիւր րոպէ դառնում է կապիտալիստի սեփականու-

դասակարգը այն կողմից էլ կը շահէր, որ երեխաների բռնած առաջւայ տեղերը կազատուէին, հասակաւոր բանուորների աւելի մեծ քանակութիւնն իրեն համար գործ կըգտնէր եւ վարձը պակասացնող մրցումը՝ կըթուլանար։

*) Святловскій. Фабричный рабочій. Варшава 1899. Стр. 32.

թիւնը և աշխատութեան վերջը, երբ ծախսած է բանւորական ամբողջ ոյժը, կապիտալիստը կատարեալ տէր է դառնում այն արդիւնքին, որը արտադրել է իւր գնած բանւորական ոյժը. այդ ծախու ոյժ տուող բանւորն էլ, դարձեալ ազատ անձ է դառնում, որի հետ կապիտալիստը կարող է նորից պայման կապել՝ նրան փող տալով և նրա աշխատելու ընդունակութիւնը գնելով։

Ուստի կատարելապէս ճիշտ կարելի է ասել, որ աշխատութեան ժամանակ բանւորը գնողին մաս-մաս տալիս է իւր միակ ապրանքը, — բանւորական ոյժը. սպառողը այդ կերպով էլ, այսինքն՝ աստիճանաբար դառնում է գնած ապրանքի, — բանւորական ոյժի, — տէրը, որի համար վճարում է միայն գործը վերջացնելուց յետոյ (սկզբից դրամ տալը՝ բացառիկ երևոյթ է)։ Այնինչ բանւորը համարեա ճիշտ առաջուց է տալիս կապիտալիստին իւր ոյժը, որովհետև իւրաքանչիւր մէկ ժամւայ աշխատանքից յետոյ «խօշէյինը» իւր գնած ապրանքի — բանւորական ոյժի մէկ մասի սեփականատէրն է դառնում, իսկ բանւորը դեռ վարձը չէ ստանում, որը նրան հասնում է՝ այդ ժամանակում տուած բանւորական ոյժի մէկ մասի համար։

Եթէ, բանւորների և գործատուների մէջ եղած պայմանների համաձայն՝ վճարման ժամանակամիջոցը բաւական երկար է, այն ժամանակ կատարելապէս պարզ է, որ բանւորների կապիտալիստին տուած պարտքն աւելի կը

մեծանայ։ Եթէ, օրինակ, քաթանի գործարանում իւրաքանչիւր ժամ գործում և վաճառատներն է ուղարկում 1000 արշին քաթան, իսկ բանւորներին իրենց վարձը միայն մէկ շաբաթից յետոյ են տալիս, այն ժամանակ պարզ է, որ այդ ժամանակամիջոցի ընթացքում բանւորները կապիտալիստներին իրենց բանւորական ոյժը տալին են որպէս պարտք։

Այդ բոլորն առաջին հայեացքից կարծես այնքան կարևոր չեն թւում, բայց արի ու տես, որ իրեն յետևից լուրջ հետևանքներ են բերում թէ՛ գործատուների և թէ բանւորների համար։

Գործատուն, բանւորներին վճարելու համար բաւականաչափ, իրեն մօտ, —դրամարկղում, —միշտ փող չէ պահում համարեա. նա՝ սովորաբար որոշ տոկոսով պահում է դրամատներում։ Այդպիսով, եթէ գործատուն պարտաւոր լինէր բանւորների վարձը իւրաքանչիւր երեկոյ վճարել, այսինքն, իւր գնած բանւորական ոյժի մէկ որոշ մասը մսխելուց անմիջապէս յետոյ, այդ դէպքում, նա զրկած կըլինէր տոկոսից այն բոլոր օրերի հաշւին, որոնց ընթացքում նա բանւորների իրեն տուած պարտքից օգտուել է։ Ճիշտ է, բանւորական օրավարձը կազմում է 50 կոպէկ, իսկ 100 ռուբլու տոկոսը տարեկան 5 ռուբլի, և այդ ժամանակ գործատուն մէկ շաբաթւայ ընթացքում իւրաքանչիւր բանւորից կըստանայ հաշիւ 1/3 կոպէկ միայն, բայց երբ

դա մէկ ամբողջ տարի է շարունակւում և վարձողն էլ շատ բանւորներ ունենում, այն ժամանակ այդ մանրիկ գումարներից կազմւում է մեծը, որովհետև իւրաքանչիւր բանւոր նրան տարեկան 15 կոպէկ է տալիս։

Կարելի էր առարկել դրան ասելով, որ բանւորները փողի այդ գումարը չեն կորցնում, որովհետև նրանք իւրաքանչիւր օրւայ վարձը չեն կարող աճեցնել։

Բայց իրենց աշխատանքը պարտքով տալու պատճառով նրանք ՀԱՍ են կրում, որն աւելի մեծ է, քան գործատուի արդիւնքը, որ ստացւում է տոկոսներից, որովհետև բանւորը պէտք է իւրաքանչիւր օր ապրուստի համար անհրաժեշտ մթերքներ գնէ։

Հնարաւորութիւն չունենալով ամէն բանի համար կանխիկ դրամ վճարել, բանւորը պարտքով է վերցնում և այդպիսով ընկնում է մանր վաշխառու—խանութպանների ճանկը, որոնք նրան պարտքով վատ ապրանքներ են բաց թողնում, կշռելիս և չափելիս գողանում և, բայի դրանից, աւելի բարձր գին առնում։ Պ. Սեեատլովսկին (գործարանային վերատեսուչ Վարշակայի շրջանի) շատ է ճառում վճարելու այդպիսի երկար ժամանակամիջոցի ՀԱՍՆԵՐԻ մասին բանւորների համար և, կատարելապէս իրաւացի կերպով, պահանջում է վճարելու կարճ ժամանակամիջոց կարգադրել։ *)

*) Фабричный рабочій. Стр. 37.

VII

ՑԱՒԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ՄԱՍԻՆ

Տեսնենք, թէ կապիտալիստն իւր գնած բանւորական ոյժն ինչպէս է գործածում։ Նրա գործածելուց կամ, ինչպէս տնտեսագէտներն են ասում, այդ առանձին տեսակի ապրանքի սպառելուց՝ ինչպէս է շահ դուրս բերում։

Այդ հարցին պատասխանելու համար, մանրամասն ուսումնասիրենք, թէ ապրանքի արդիւնաբերելը կամ պատրաստելն ինչպէս է կատարւում։

Եթէ ոևէ մէկն ուզում է աշխատել, նա ամէնից առաջ պէտք է նիւթ ունենայ, որի վրայ որ պէտք է իւր աշխատանքը թափէ. երկրագործը հող պէտք է ունենայ, հանքահանը՝ հանք, դարբինը՝ երկաթ։ Բոլոր հում նիւթերը. ինչպէս օրինակ, հացահատիկը, հանքը, բոլորը հանդիսանում են բնութեան արտադրութիւններ. ինքը մարդը ոչ մէկ նոր նիւթ չէ կարող ստեղծել, նա միայն եղածին կարող է ուրիշ ձև տալ։ Այդպիսով հողը, ջուրը և օդը կարծես մէկ ահագին վաճառատուն են

կաշմում, որից մարդիկ աշխատանքի համար նիւթ են վերցնում։ Մարդն այդ վաճառատնից նիւթ է վերցնում, նրա հողի հետ բնական կապը քանդում և նրա համապատասխան՝ օգտակար ձև տալու համար մշակում։ Իւրաքանչիւր առարկայ, որը մարդկային ձանքի շնորհով, կարած է հողից, բայց դեռ անմշակ է մնացել, ինչպէս օրինակ՝ ՔԱՆԴԱԾ քարածուխը, ԿՏՐԱԾ ծառը և այլն, — կոչւում է ՀՈՒՄ ՆԻՒԹ։

Բաւական չէ, որ բանւորը հում նիւթ ունենայ. իւր բանւորական ոյժը գործադրելու համար նրան անհրաժեշտ են դեռ ուրիշ առարկաներ էլ, որոնք կ՝ բնես նրա ձեռքի շարունակութիւն են կազմում, օրինակ՝ եղանը. որոնք մեծացնէին նրա բռունցքի ոյժը, օրինակ՝ մուրճը, և այլն։ Այդպիսի օժանդակիչ միջոցները՝ եղանը, մուրճը՝ կոչւում են ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ։ Քարը, որը վայրենին գործ է ածում հնդկական ընկոյզը կոտրելու համար, աշխատանքի այնպիսի էլ մէկ գործիք է, որպէս է ամենակատարելագործած մեքենան։

Հում նիւթը, աշխատանքի գործիքները և մարդու բանւորական ոյժը, այդ երեք գլխաւոր ֆակտորներն են, որոնց միատեղ գործունէութեան միջոցին առաջանում է նոր, գործածութեան համար հարկաւոր, արդիւնք (այսպէս անուանած ՖԱԲՐԻԿԱՏ)։ Դիտենալով այդ երեք ֆակտորները, կարելի է որոշել՝ թէ ինչ բանից իւրաքանչիւրը նոր երևան եկող արդիւնքի, այն է, ապրանքի, փոխանակութեան արժէքի վրայ ի՞նչպիսի ազդեցութիւն է անում։

Շնորհով աշխատանքի, իւրաքանչիւր հում նիւթ փոխում է իւր ձևը։ Այսպէս, օրինակ, երկաթը տափակեցնելու շնորհով դառնում է երկաթաթերթ։ Այդ միջոցին հում նիւթը կամ ամբողջութեամբ կարող է հում նիւթի վերածուել, օրինակ, երկաթ՝ երկաթաթերթ, կամ ամբողջովին գործադրւում է և ոչնչանում, օրինակ, ածուխը, որը երկաթի հանքը հալելու համար անհրաժեշտ է, կամ հում նիւթի մէկ մասը դառնում է նոր արդիւնք, միւս մասն էլ մնում է կատարելապէս առանց գործածութեան, օրինակ՝ մանողի քօլքը։

Հում նիւթի արժէքը կախւած է անհրաժեշտ—հասարակական աշխատանքի չափից, որը գործադրւած է այդ հում նիւթի արդինաբերութեան և արտաբերութեան վրայ։ Այդ արժէքը առանց պակասեցնելու կամ բարձրացնելու, պատրաստի արդիւնքի արժէք է դառնում, որը երևան եկաւ, որպէս աշխատանքի եզրակացութիւն։ Եթէ դերձակը մահուդից վէստոն է կարում, այն ժամանակ մահուդի արժէքն ամբողջովին մտնում է վէստոնի արժէքի մէջ, այդպիսով, գործածւող ապրանքի արժէքը կրպարունակւէ ստացւած արդիւնքի արժէքի մէջ։ Արժէքի ոչ մէկ աւելորդ մասը չէ մտնում արդիւնքի մթերքի մէջ, արդիւնքին միայն այն արժէքն են տալիս, որը նիւթի՛ մէջ է պարունակւում։ Միայն գործա-

դրված աշխատանքն է, որ ՆՈՐ ԱՐԺԷՔ է աւելացնում հնի վրայ, որը արդէն պարունակւում էր հում նիւթի մէջ։

Արդիւնաբերութեան գործիքները և մեքենաները, նրանցից օգտուելու պատճառով, աստիճանաբար հնանում են։ Խարտոցը, որից փականագործն օգտւում է իւր գործի մէջ, դառնում է բութ և գործածութեան համար անպէտք. սայլը որով ածուխ են տանում, որպէս և այլ իւրաքանչիւր առարկայ, ժամանակի ընթացքում գործածութեան համար անպէտք է դառնում, և այլն։ Սակայն մէծ մասամբ աշխատանքի գործիքները բաւական են մեծ քանակութեամբ ապրանք արդիւնաբերելու համար. փականագործը մէկ խարտոցի օգնութեամբ կարող է շատ բանալիներ խարտել. սայլապանը իւր սայլով կարող է մեծ քանակութեամբ ածուխ տեղափոխել։ Այդպիսով, եթէ գործածւող հում նիւթի արժէքն ամբողջովին փոխւում է պատրաստի արդիւնքի արժէքի, այն ժամանակ աշխատանքի գործիքները արդիւնքի միայն իրենց արժէքի մէկ մասն են տալիս, այն մասն, որն այդ աշխատանքի պատճառով նրանք կորցրել են։ Եթէ, օրինակ, 100 բանալի խարտելու համար բաւական է մէկ խարտոց, այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրի մէջ խարտոցի 1/100 մասն է պարունակւում։

Այստեղ մենք տեսնում ենք, որ աշխատանքի գործիքներն նոյնպէս, ինչպէս և հում

նիւթը. նոր արժէքի մէկ չնչին մաս էլ չեն ստեղծում, թեկուզ առաջին հայացքից երևար, որ աւելի կատարելագործած մեքենաները, մարդու աշխատանքի տեղը բռնելով՝ պէտք է նոր արժէքի ստեղծման վրայ ազդեն։ Բայց հօ մենք արդէն գիտենք, որ արժէքը միայն մարդկային աշխատանքից է առաջանում։ Միայն այդ աշխատանքի պատճառով, մարդկային անհրաժեշտ–հասարակական աշխատանքի պատճառով, այն արժէքին, — որը գտնւում է հում նիւթի մէջ և որն աշխատանքի գործիքներից անցաւ նոր արդիւնքի մէջ, — աւելանում է նոր արժէք։

Եթէ, օրինակ, հում նիւթի արժէքը ներկայացնում է մարդկային 10 ժամւայ անհրաժեշտ–հասարակական աշխատանք, եթէ յետոյ բանեցրած գործիքի մէկ մասի արժէքը համապատասխան է աշխատանքի 3 ժամին և այդ հում նիւթից աշխատանքի գործիքների օգնութեամբ, նոր արդիւնք արտադրելու համար հարկաւոր լինէր 7 ժամ գործադրել, — այն ժամանակ այդ դէպքում կրկին արտադրած արդիւնքը անհրաժեշտ–հասարակական աշխատանքի 10+3+7=20 ժամւայ արժէք կ'ունենայ։

Աւելի պարզ կերպով ցոյց տանք այդ։ Օրինակ, ենթադրենք, որ անհրաժեշտ–հասարակական աշխատանքի մէկ ժամը 10 կոպէկի արժէք է ներկայացնում։ Զորս բանւոր միասին վերցնում են մէկ պատ շարելը։ Նրանք

1000 աղիւսի համար կաւ են գնում ու դրան վճարում 50 կոպէկ. կապիտալիստը տալիս է նրանց աղիւսի գործարանը, սարայը, սայլակներ, ձևեր և ուրիշ պարագաներ, որոնցից օգտուելու համար բանուորները իւրաքանչիւր 1000 աղիւսին 60 կոպէկ են տալիս աղիւսներն այրելու համար էլ հարկաւոր է 24 ժամւայ աշխատանք, կամ, իւրաքանչիւր ժամը 10 կոպէկ հաշուելով՝ 2 ռուբլի 40 կոպէկ։ Այդպիսով 1000 այրած աղիւսի արժէքը հաւասար կըլինի 4 ռուբլի 10 կոպէկի։

Բանուորները հում նիւթի արժէքը և աշխատանքի գործիքների վարձը՝ առաջուց են վճարել՝ բայց այդ վճարած արժէքը նրանք դարձեալ գտնում են պատրաստի արդիւնքի, աղիւսների մէջ։ Այդ արժէքին նրանք նոր արժէք են աւելացրել, — իրենց աշխատանքի արժէքը (2 ռուբլի 40 կոպէկ)։

Այդ բանը տեղի է ունենում իւրաքանչիւր առարկայի արդիւնաբերութեան ժամանակ։ Նոր արդիւնքի մէջ՝ բայց հում նիւթի արժէքից և բանեցրած գործիքների արժէքից՝ պարունակւում է և՛ նոր ապրանքի արդիւնաբերութեան վրայ գործադրած աշխատանքի արժէքը։ Այդ օրէնքը բոլորովին չէ փոխւում, երբ բանուորներն իրենք իրենց համար և կամ ձեռնարկի օգտի համար աշխատեն։ Եթէ բանուորներն իրենք իրենց համար աշխատէին, այդ դէպքում աղիւսները ծախելիս նրանք իւրաքանչիւր 1 ժամւայ աշխատանքի համար կըստա-

նային 10 կոպէկ։ Եթէ միևնոյն ժամանակ ենթադրենք, որ բանուորը 60 կոպէկով կարողանում է ձեռք բերել այնքան անհրաժեշտ առարկաներ, որքան իրեն և իւր ընտանիքի ապրուստը հոգալու համար հարկաւոր է՝ սովորական պարագաներում՝ այն ժամանակ ամենօրեայ բանուորական ոյժի արժէքը կըկազմէր 60 կոպէկ և այդ արժէքին կըհամապատասխանէր 6 ժամւայ աշխատանքը։ Եթէ բանուորները մէկ օրւայ ընթացքում միայն 6-ական ժամ աշխատէին, այն ժամանակ մէկ օրւայ ընթացքում նրանք այնքան նոր արժէք կ՚առաջացնէին, որքան հարկաւոր է իրենց ապրուստի համար։ Եթէ, սակայն, կրկնակի ժամանակ աշխատէին, այդ դէպքում կրկին արտադրած արժէքը երկու անգամ աւելի կըլիներ և այնպէս էլ կըպատկանէր բանուորներին, որպէս և ինքը աշխատանքի արդիւնքը, — աղիւսները։

Այս դէպքում, երբ բանուորներն իրենց ամբողջ բանուորական ոյժը տալիս են ձեռնարկուին, ամբողջ գործը այնպէս էլ ճշտօրէն կատարւում է, բայց նրա վերջանալուց յետոյ տեղի է ունենում բոլորովին այլ հաշիւ։

Ենթադրենք, օրինակ, որ ձեռնարկուն ինքն իրեն համար ձեռք է բերում ածուխ, կաւ և աղիւս պատրաստելու համար հարկաւոր պարագաներ ու դրանց վճարում է այնքան, որքան առաջ բանուորներն էին վճարում, բանուորներից էլ գնում է բանուորական ոյժ և դրա համար օրական 60 կոպէկ է տալիս։ Եթէ նը-

բանք մէկ օրայ մէջ 6-ական ժամ աշխատէին, այն ժամանակ ձեռնարկուն, գումարը դնելով, այսպիսի եզրակացութեան կըգար՝

Կաւի համար վճարած է . . .	50	կոպ.
Ածուխի „ „ . . .	60	„
Գործիքներից օգտուելու համար վճարու.	60	„
Աշխատավարձ 4 բանուորի, 60-ական կոպ.	2 ր.	40
Գումար	4 ր.–10	կոպ.

Այդ փողով նա կըստանար 1.000 աղիւս, որը, ինչպէս մենք տեսանք, այն արժէքն ունէ (4 ր.–10 կոպէկ), որը նրա գործադրած կապիտալին համապատասխան է, այսինքն ձեռնարկուն ո՛չ մէկ կոպէկ կորցրեց և ոչ էլ վաստակեց։ Այդ աղիւսները ծախելով նա, իհարկէ, կարող էր օգուտ ստանալ, բայց նա վաճառական լինելու մտադրութիւն չունէ։ Եթէ նա այդ բանը աչքի առաջ ունենար, այն ժամանակ նա ինքը ստիպած չէր լինի աղիւսարտադրել, այլ ուղղակի պատրաստի ապրանք դնելով կըզբաղէր։ Ձեռնարկուի իսկական նըպատակն է եղել բանուորական ոյժը դնելու միջոցով ստանալ յաւելեալ արժէք այն արժէքի վրայ, որը գործադրուած էր առաջ, այն է, գործի մէջ դրած կապիտալի վրայ. սակայն այս դէպքում ձեռնարկուն իւր ապրանքի տեղ ստանում է միայն այնքան, որքան ինքն է մտցրել։

Սակայն ձեռնարկուն գիտէ թէ այդպիսի դէպքերում ի՞նչ պէտք է անէ. «Ձեր օրական բանուորական ոյժը,– դառնալով բանուորներին ասում է նա,–ես ձեզանից ամբողջովին գնել

եմ, ուստի դրանից օգտուելը, որպէս դուք ինքներդ էք համաձայնուել, բաձառապէս ինձ է պատկանում։ Եթէ ես, օրանակի համար, կիտրոն (լիմոն) եմ գնում դրա սպառողական արժէքը, այսինքն նիւթը, նոյնպէս ինձ է պատկանում. ես կատարելապէս իրաւունք ունեմ կիտրոնի հիւթի վերջին քաթիլն անգամ քաժել։ Ձեր օրական բանուորական ոյժն ամբողջապէս աշխանքի 6 ժամուայ համար չէ վերցրած, և ես պահանջում եմ ձեզանից 12 ժամուայ աշխատանք»։

Դրա դէմ կարիք չկայ խօսել։ Բանուորները սկսում են օրական 12 ժամ աշխատել։ Իհարկէ, աշխատանքի կրկնակի արդիւնաւէտութեան միջոցին, նրանք երկու անգամ աւելի մեծ քանակութեամբ (2.000) աղիւս են արդիւնաբերում՝ այդ դէպքում երկու անգամ աւելի մեծ քանակութեամբ նիւթ սպառելով։ Այժմ այսպիսի հաշիւ դուրս կըգայ.

Ձեռնարկուն վճարում է

Կաւի	1	ռուբլի	(առաջ. 2 անգամ աւելի)
Ածուխի	1 „–20	կ.	
Աշխատանքի գործիքների	1 „–20	„	
ուրի (օրական 60 կ.)	2 „–40	„	այնքան, որքան առաջ
Գումար	5ր.–80	կ.	

Այդքան դրամ է ծախսել կապիտալիստը և ստացել 2.000 աղիւս։ Ինչպէս նախընթաց հաշուից տեսանք, իւրաքանչիւր հաղար աղիւսը

ներկայացնում է 4 ռուբլի 10 կոպէկի արժէք. 2 հազարից նա ստացել է 8 ռուբլի 20 կոպէկ, այն է, ծախսածից 2 ռուբլի 40 կոպէկ աւելի։ Այդ երկու ռուբլի քառասուն կոպէկն էլ հանդիսանում է ՑԱՒԵԼԵԱԼ ԱՐԺԷՔ (կապիտալիստի օգուտը)։ Դա նոր արժէքի հէնց այն քանակութեանն է հաւասար, որը արտադրել են բանւորները՝ ստիպած լինելով 6 ժամից աւելի աշխատել. 4 բանւոր օրական 6 ՑԱՒԵԼԵԱԼ ժամ են աշխատել, այն է, ընդամէնը 24 ժամ, որը իսկապէս մեր յաւելեալ արժէքը, —2 ռուբլի 40 կոպէկն է կազմում։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ կապիտալը սեփականատիրոջը միայն այն ժամանակ կարող է յաւելեալ արժէք տալ, երբ այս վերջինս ապրանքը աժան է գնում կամ աւելի թանկ ծախում, քան նա արժէ։ ՎԱՃԱՌՈՒԱԿԱՆ կապիտալն ապրանքների հետ ոչ մէկ առնչութիւն չունէ։ Միայն ժամանակակից կապիտալը, ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ կապիտալը, կարող է ապրանքի ամբողջ արժէքը վճարել, ապրանքն իւր լիակատար արժէքով վաճառել և իրեն համար էլ ՑԱՒԵԼԵԱԼ ԱՐԺԷՔ ստեղծել։

Իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ երբ բանւորները հարկադրւած են իրենց բանւորական ոյժը վաճառել՝ նրա արժէքի միայն մէկ մասը ստանալով։

VIII

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՃՈՒՄԸ

Մենք տեսանք, թէ ինչպէս է կապիտալիստը յաւելեալ արժէք ստանում. նա վաճառանոցի գնով գնում է բանւորական ոյժը, հարկադրում է նրան գնած գործիքների միջոցով հում նիւթի վրայ աշխատել և այդպիսով արդիւնաբերած ապրանքները ծախում է, ոչ միայն մխած փոդերը վերադարձնելով, այլ և յաւելեալ արժէք ստանալով։

Ստացած յաւելեալ արժէքի մէկ մասը ձեռնարկուն ծախսում է իւր սեփական պահանջների վրայ. իսկ մնացածն աւելացնում է կապիտալի վրայ։ Այժմ նրա կապիտալն առաջւանից աւելի շատ կըլինի և կապիտալիստը կարող է աւելի բանւորական ոյժ գնել, բայց որովհետև իւրաքանչիւր բանւոր որոշեալ օգուտ է տալիս, ուստի ձեռնարկուի վաստակն էլ աւելանում է։ Մեծ եկամուտները դարձեալ հնարաւորութիւն են տալիս մեծացնել կապիտալը և աւելի շատ բանւորական ոյժ գնել, և այլն։ Ուրեմն կապիտալի զարգացու-

մից է կախուած բանւոր դասակարգի զարգացումն ու բարեկեցութիւնը։ Այդ տեսակէտից բանւորների և կապիտալիստների շահերը զուգադէպ են. բանւորը կըկորչէ, եթէ կապիտալիստը նրան աշխատանք չտայ, կապիտալիստն էլ կ'ոչնչանայ, եթէ բանւորական ոյժ չըգտնէ։ Ուստի որքան շատ է աճում, զարգանում, արդիւնաբերական կապիտալը, որքան աւելի է զարգացած արդիւնաբերութիւնը, այնքան էլ աւելի է հարկաւոր բանւորը, այնքան էլ աւելի թանկ կըվաճառէ նա իւր բանւորական ոյժը։ Ուրիշ խօսքով, բանւորների, թեկուզ տանելի գոյութեան համար, արդիւնաբերական կապիտալի արագ աճումը հանդիսանում է մէկ անհրաժեշտ պայման։

Բայց միւս կողմից կապիտալի աճումը ցոյց է տալիս կապիտալիստների զօրութեան մեծացումը՝ աւելի մեծ քանակութեամբ վարձու բանւորների վրայ։

Ինչպէս մէկ աւելի յարմար դէպք, այսինքն, երբ կապիտալի զարգացման հետ մեծանում է և աշխատանքի պահանջը և, հետևաբար, աշխատանքի արժէքը,—աշխատավարձը։

Փոքրիկ տնակը կարող է սեփականատէրի պահանջներին բաւարարութիւն տալ, քանի դեռ նրան շրջապատող խրճիթերն էլ մեծ չեն։ Բայց թո՛ղ մօտերքը երկու-երեք մեծ տներ բուսնեն՝ մեր տնակն էլ մէկ խրճիթ կ'երևայ և կըծառայէ որպէս ապացոյց այն բանի, որ տէրը համեմատաբար աղքատ է մեծ տան սեփականատէրից։

Եթէ նոյնիսկ ժամանակի ընթացքում փոքրիկ տնակը երկու անգամ աւելի մեծանար և եթէ դրա հետ էլ հարևան տունը նոյնպէս մեծացրած լինէր, այն ժամանակ տնակի բնակիչը ինքնիրեն սեղմուած ու ծանր կըզգար։

Աշխատանքի իւրաքանչիւր նշանաւոր աւելացումը նախորոշում է կապիտալի աւելի մեծ աճումը, կապիտալի արագ զարգացումն էլ իւր յետևից բերում է հարստութեան, զարգացութիւնների և պահանջների մէկ ահագին մեծացում։ Եւ դրա համար էլ, թէև բանւորների համար ապրուստի յարմարութիւնները միքիչ լաւացան, բայց աւելի մեծացան նրանց պահանջներն էլ, որոնց բաւարարութիւն տալ նրանք չեն կարող։ Նշանակում է, որ նա, ինչպէս և մեր տնակի սեփականատէրը, իրեն առաջուանից աւելի դժբաղդ է զգում։

Աշխատանքը պէտք է համեմատաբար դնահատել, — նրան կապիտալիստի եկամուտի՝ հետ համեմատելով. մէկ խօսքով, պէտք է ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ աշխատավարձի մասին խօսել։

Ենթադրենք, օրինակի համար, թէ ապրուստի բոլոր անհրաժեշտ միջոցների արժէքը 2/3-ով ընկել է (գրաքան 3 կոպէկ արժեցող հացը արժէ 1 կոպէկ), այն ինչ աշխատավարձը միայն 1/3-ով է իջել (60 կոպէկից՝ 40 կոպէկի)։ Թէև բանւորը 40 կոպէկով այժմ աւելի ապրանքներ կըգնէ քան առաջ 60 կոպէկով (առաջ 60 կոպէկով նա միայն 20 գնանքայ հաց էր ստանում, այնինչ այժմ իւր 40 կոպէ-

կով ստանում է 40 գրանքայ), այնուամենայնիւ նրա աշխատավարձը՝ համեմատած կապիտալիստների եկամուտի հետ՝ իջել է, որովհետև աւելի քիչ քանակութեամբ փողով նա կապիտալիստին առաջւայ չափ աշխատանք է տալիս։ Կապիտալիստը հէնց նոյն այդ կապիտալով որպիսին առաջ էլ ունէր, կարող է աւելի մեծ չափով աշխատանք գնել։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ աշխատավարձը և օգուտը մէկը միւսին հակադարձ համեմատութեան մէջ են գտնւում. օգուտը բարձրանում է այն չափով, որ չափով վարձն է ընկնում և՛ ընդհակառակը։

Մինչև այժմ մենք այնպես էինք կարծում, թէ արդիւնաբերական կապիտալը իւր զարգացումով աւելի մեծ թւով բանւորների է աշխատութիւն տալիս և նպաստում աշխատավարձի բարձրանալուն։ Բայց դա մի՞շտ է լինում արդէօք։ Աւելի ուշադրութեամբ նայելով, մենք այդ հարցին ստիպւած կլինենք բացասական պատասխան տալ։

Իսկապէս, կապիտալի զարգանալով կապիտալիստների թիւը և հարստութիւնը մեծանում է։ Կապիտալիստների թւի և ձեռնարկութիւնների մեծանալը՝ կապիտալիստների մէջ մրցում է առաջացնում և իւրաքանչիւրը իւր մթերքների ժանութեամբ՝ աշխատում է միւսին յաղթահարել։ Բայց առանց վնասի և աւելի ժան ծախելու հնաւորութիւն ունենալու համար՝ կապիտալիստը պէտք է ժան արդիւնաբերէ, այն է, որքան կարելի է բանւորների աշխատանքի

արդիւնաւէտութիւնը մեծացնէ։ Աշխատանքի արդիւնաւէտութիւնն էլ ամենից առաջ աւելանում է՝ շնորհով աշխատանքի աւելի մեծ բաժանումի ներմուծման, նոր մեքենաներ գործածելով և հները կատարելագործելով։ Այժմ ենթադրենք, որ այդպիսի փոփոխութիւնների և կատարելագործումների պատճառով կապիտալիստը՝ աշխատանքի նոյն այն չափի ժամանակ՝ հնարաւորութիւն է ունենում աւելի մեծ քանակութեամբ ապրանք արդիւնաբերել, քան իւր մրցակիցները. օրինակ՝ նա կարողանում է մէկ ամբողջ արշին քաթան գործել ա՛յն միևնոյն բանւորական ժամանակի ընթացքում, որը հարկաւոր էր մրցակցին կէս արշին գործելու համար։ Այն ժամանակ նա կարող կը լինէր մէկ արշին քաթանը նախկին գնով վաճառել և աւելի մեծ եկամուտ ստանալ։ Բայց նրա կատարելագործւած մեքենաները և ընդարձակած գործարանը՝ աւելի շատ քաթան սն արտադրուս քան առաջ։ Սա պէտք է նոր վաճառանոց գտնէ իւր ապրանքները ծախելու համար. բայց ա՛յն դէպքում միայն կարող է նոր սպառողներ գտնել, երբ կըսկըսէ քաթանը իւր մրցակիցներից աւելի ժան գնով ծախել։ Իհարկ է, մէկ արշին քաթանը նա այն գնով չի վաճառէ, ինչ գնով որ առաջ կէս արշինն էր ծախում, որովհետև այն ժամանակ իւր ներմուծած բարելաւումները նրան ոչ մէկ օգուտ չէին տայ, որովհետև ընդհանուր առմամբ՝ նա այնքան կ՛աշխատէր, որքան և առաջ, բայց

դրա հետ էլ ստիպած կը լիներ կրկնակի քանակութեամբ քաթանի՝ որը այժմ իւր գործարանում է արտադրում՝ համար սպառողներ որոնել։ Միւս կողմից, արժէքի այդպիսի ցածրանալը նրա համար անհրաժեշտ չէ հանդիսանում։ Բաւական է, որ նա իւր քաթանն ուրիշ գործարաններից կէս կոպէկով աժան ծախէ, — այն ժամանակ էլ նա բաւականաչափ սպառողներ կը գտնէ և այնտեղից իւր մրցակիցներին կը հեռացնէ։

Սակայն մեր կապիտալիստի այդ շահաւէտ դիրքը երկար չէ շարունակւում. նրա հետ մրցող կապիտալիստները շուտով ներմուծում են նոյն այն մեքենաներն ու բարելաւումները, նոյնպիսի, կամ աւելի մեծ չափով և նոյնպէս սկսում են ապրանքներն աւելի աժան արտադրել։ Որպէսզի նորից դէպի իրենց քաշեն կորցրած սպառողներին, կապիտալիստները պէտք է ապրանքը աւելի աժան վաճառեն, քան մրցակիցները և, վերջ ի վերջոյ, քաթանի գինը կընկնէ մինչ արտադրութեան ծախսերը։

Այժմ կապիտալիստներն այնպիսի դրութեան մէջ են ընկնում, որի մէջ էին մինչ նոր մեքենաների ներմուծելը և դրա հետ նրանք ստիպած են կրկնակի քանակութեամբ քաթան արդիւնաբերել և դրա համար սպառողներ գտնել։ Նշանակում է դարձեալ նրանցից իւրաքանչիւրը պէտք է աշխատէ նոր կատարելագործումներ մտցնել, որպէսզի ուրիշներից աւելի աժան վաճառելու հնարաւորութիւն ունենայ և այդպիսով իրեն մօտ քաշելու սպառողներին։ Եթէ կապիտալիստին այդ բանն աջողւում է, այն ժամանակ նրա այդ աջողութիւնը կարճատև կը լինի, որովհետև նրա մրցակիցներն անմիջապէս նրա օրինակին կը հետևեն ու նորից հին հէքիաթը կը սկսւէ։

Եթէ կապիտալիստն այդ կռւում աւելի կատարելագործած մեքենաներ ունենայ, այն ժամանակ մրցումը նրանց (մեքենաներին) կը դարձնէ հանրագործածական և արդիւնաբերութեան կատարելագործման վերջնական եզրակացութիւնը կը լինի այն միայն որ կապիտալիստը ՄԻԵԻՆՈՑՆ ԱՐԺԷՔՈՎ 10, 20, 100 անգամ աւելի շատ ապրանք կը հասցնէ, քան առաջ և բացի այդ ստիպած կը լինի մթերքի համար սպառողներ ճարել, քանի որ քանակութիւնը 10, 20, 100 անգամ աւելի է մեծացել։ Նշանակում է կապիտալիստը, չընայած իւր ջանքերին, ոչ մէկ բան չ՚արեց, բացի աւելի մեծ քանակութեամբ մթերք հասցնելու ստիպած լինելուց՝ միևնոյն ժամանակի ընթացքում։ Մէկ խօսքով, կապիտալիստը իւր կապիտալը մեծացնելու համար աւելի դժուարին պայմաններ ստեղծեց և ստիպած է միշտ նոր կատարելագործումներ, միշտ աշխատանքի աւելի բաժանումն մտցնել։

Ապա ի՞նչ ազդեցութիւն են թողնում այդ պայմաններն աշխատավարձի վրայ։

Աշխատանքի աւելի մեծ բաժանումն ու աւելի լաւ գործիքները Մէկ բանւորի հնարաւո-

ըութիւն են տալիս այնպիսի աշխատութիւն կատարել, որը առաջ 5, 10, 20 բանուորներ էին կատարում։ Օրինակի համար, այնտեղ, ուր առաջ 1.000 բանուոր էր հարկաւոր այժմ 100–ն էլ բաւական է, իսկ 900–ը փողոց կը-նետուին ու իրենց մրցումով գործ ունեցող բան-ուորների աշխատավարձը կ'ԻՋԵՑՆԵՆ։

Նկատենք, որ աշխատանքի բաժանման մե-ծանալով, աշխատանքն աւելի հասարակ է դառ-նում։ Բանուորից այլևս մէկ առանձին պատ-բաստականութիւն և արագաշարժութիւն չէ պա-հանջուում, այլ միայն սովորական բանուորական ոյժ։ Աշխատանքը իւրաքանչիւրին մատչելի է դառնում, ամէն կողմից երևան են գալիս մր-ցակիցներ և սովի ու կարիքի ճնշման տակ՝ առաջացնում են վարձի աւելի ցածացում։ Այդ ցածանալն աւելի ևս սաստկանում է շնորհով մրցման կանանց և երեխաների, որոնց համար աշխատութիւնը մեքենայի վրայ՝ նոյնպէս դար-ձել է մատչելի։

Այդպիսով, մենք տեսնում մենք, թէ որքան աճում է արդինաբերական կապիտալը, այնքան աւելի է զարգանում աշխատանքի բաժանումն ու մեքենաների գործածութիւնը։ Իսկ որքան զարգանում է աշխատանքի բաժանումն ու մե-քենաների գործածութիւնը, այնքան ուժգին կերպով բանուորների մէջ սաստկանում է մրցու-մը, այնքան էլ ընկնում է աշխատանքի վարձը։

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Առաջաբան	5
Ներածութիւն	7
I. Աշխատանքն ու նրա բաժանումը. .	20
II. Շքեղութիւն	24
III. Ապրանքների արժէքը.	31
IV. Դրամ և արժէք	53
V. Կապիտալ	59
VI. Բանուորական ոյժը որպէս ապրանք.	65
VII. Ցաւելեալ արժէքի մասին. . . .	77
VIII. Կապիտալի աճումը	87

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	տող	Տպված է	Պէտք է լինի
6.	17.	ասպարէզում . .	ասպարիզում
13.	1.	կատարելապէս .	կատարելապէս
»	10.	հիանդանաբ . .	հիւանդանաբ
16.	24.	ազինքը	արդիւնքը
25.	9.	յարմար	համար
26.	20.	իրենց, ...	իրենց
36.	5.	այտեղ	այստեղ
»	6.	հիւանն	հիւանը
»	30.	որոնքմ	որոնք
»	»	այժ	այժմ
39.	8.	աւլի.	աւելի
»	10.	ունէ.	չունէ
»	26.	դառձնենք . . .	դարձնենք
42.	19.	ուռոտի	ուռստի
44.	5.	երանդի	եռանդի
»	13.	դառձնել	դարձնել
46.	27.	դառձեալ	դարձեալ
47.	7.	դառձնել	դարձնել
»	15.	աչխատանքն . .	աշխատանքն
»	18.	անհրաժեչտ. . .	անհրաժեչտ
»	25.	նրարց.	նրանց
48.	10.	աւլի.	աւելի
51.	1.	դառձնել	դարձնել
»	15.	դառձնել	դարձնել
58.	10.	կոչուում	կոչուում
»	20.	ջուլխակի . . .	ջուլհակի
60.	11.	պահանջ	պահանջն
»	21.	արդիւնաբերբութ	արդիւնաբերութիւններէ
»	27.	արդիւնաբերբութ.	արդիւնաբերութեան
62.	8.	Յովհաննեսից. .	Յովհաննէսից
»	25.	Յովհաննէսի . .	Պօղոսի
»	»	Պօղոսի	Պետրոսի
67.	29.	արժէքնէր . . .	արժէքներ
72.	4.	բանւորի	բանւորը
74.	12.	իրեն.	իրենց
76.	24.	Վարչակայի . .	Վարչաւայի
78.	29.	ֆաքտորները . .	ֆակտորները
80.	12.	մէծ	մեծ

ՀՀ Ազգային գրադարան
NL0201752